



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material



Gloria

Ecclesiasticus

1616







891.99

6 ✓

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1961 թ.

Մ. ԶԱԽԱՐ

ՀԱՅՆԱՄԵ

ԲԱՏՐԵՐԿ ՀԻՆԴ ԱՊԱՐՎԱՅՐ

ԱՐԱՆԱՑԵԼ Ե
ԽՈԴՈՒ ՊՈՂԿՈՍԻՈՐՔԻ ԴԱՅԵՄՐԱՄԱ
ՄՐՈՒԽԱՆ Յ-ՐԴ ՄԹԵԱՆԱԿԻՆ

ՊԵՏՐՈՎ 1935 ՅԵՐԵՎԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

+ 5914 93577

Առաջնոր շապիկը, կազմը, անվանաբերքը
յևլ նկարները՝ նի. Ալ. Գանդուրյանի



Տեխ. խմբագիր Տ. Խաչվանցյան
Սրբազրիչ Ա. Շահբազյան



Պետհրատի առարկան
Քլավիստ 84, պատվելք 193
Հրատ. 3256, արժան 5000

ЖЮРИ КОНКУРСА
СОВНАРКОМА СССР
НА ЛУЧШУЮ ПЬЕСУ


Тов. ДЖАНАН

Жюри извещает Вас, что на конкурсе Совета Народных Комиссаров СССР на лучшую пьесу, объявленном 17 февраля 1933 года, Ваша пьеса „Шахнамэ“ удостоена третьей премии.

ПРЕДСЕДАТЕЛЬ ЖЮРИ

ЧЛЕНЫ ЖЮРИ

II апреля 1934 г.
Москва.



ԽՍՀ ՄԻԱԽԹՅԱՆ ԳՐՈՂԵՆՔԻ ՄԵջ ԼԱՎԱԳՈՒՅՆ
ՊԻԵՍՆԵՐԻ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ՄԱՍԻՆ:

ԽՍՀ ՄԻԱԽԹՅԱՆ ԳՐՈՂԵՆՔԻ ԿԱՎԱՐՏԱԿԱՆ ԽՈՐԴԲՈՒ-
1955 թ. ՓԵՎՐՈՒԱՐԻ 17-Ի ՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հասունել նշանակություն տալով թատրոնին, գոր-
ծես աշխատավորական լայն մասսաների քաղաքական
զառափարակության առավել ազդու միջոցներից մե-
կի, և թատերական բարձր դեղարվեստական պիես-
ներ ստեղծելու նպատակով, վորոնք կարող լինեն ո-
ժանդակել մասսաներին սոցիալիզմի վողով լուսա-
լորելու գործին:

ԽՍՀ Միաւթյան ժողովրդական կոմիտարների
Խորհուրդը վերոշում է:

1. Հայտարարել ԽՍՀՄ դրադների մրցություն՝
թատերական լավագույն պիեսներ ստեղծելու համար
(թեժաները՝ դրոզների ընտրությամբ, ԽՍՀՄ և ար-
տասահմանի կենցաղից):

2. Մրցության ներկայացված լավագույն դրամա-
տիկական դորձերի պարզեատրման համար սահմա-
նել ԽՍՀՄ ժողովրդական կոմիտարների Խորհրդի տաս
ժրցունակ.

2 առաջին մրցանակ 15-ական հաղար սուրյի.

3. յերկրորդ մրցանակ 10-ական հազար ռուբլի:

5. յերրորդ մրցանակ 5-ական հազար ռուբլի:

Պիեսները մրցանակին ներկայացնելու ժամկետը՝

1-ն նոյնմթիրի 1933 թ.:

Պիեսները կազող են ներկայացվել մրցանակին դեմքով կամ հեղինակի ստորագրությամբ:

2. Մրցությանը ներկայացվող պիեսները քննելու և մրցանակ հատկացնելու համար նշանակել ժյուրի հետնյալ կազմով՝ Սահելի Ա. Ի. (Ժյուրիի նախադահ), Բուրմով Ա. Ա. (ՌՍՀՖՀ լուսժողկոմ), Գրանսկի Ի. Մ. (խորհրդային դրողների Միության կազմիածնելի նախադահ), Լունաչարսկի Ա. Վ. (ԽՍՀՄ-ի լենտգործկամին կից Գիտական կոմիտեյի նախադահ), Ստանիսլավսկի Կ. Ա. (Մոսկվայի Գեղարվեստական Ակադեմիկ Առաջին թատրոնի դիրեկտոր), Մեյլը Խորլ Վ. Ե. (Թատրոնի դիրեկտոր), Կուլիկ Ի. Յու. (ՌՍՀՖՀ խորհրդային դրողների Միության կազմիածնելի նախադահ), Վլադիմիրով Վ. Կ. (Փոքր թատրոնի դիրեկտոր), Միմոնով Ա. Ն. (Վախթանգովի անդամն թատրոնի ռեժիսոր), Լյուբիմով-Լանսկոյ Յե. Ա. (Մոսկվայի Արհմիութենական թատրոնի դիրեկտոր), Լիտովյան Ա. Ա. (ՌՍՀՖՀ Գլխական թատրոնի պետ), Տոլստոյ Ա. Ն.:

ԽՍՀ Միության ԺԿԽ նախագահ՝

Վ. ՄՈՒՈՑՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀ Միության ԺԿԽ գործերի կառա-

վարչի տեղակալ՝ Ի. Միրո՛՛նինին,

Մոսկվա, Կրեմլ

ՄՐՅԱԿԻՆԵՐԸ ԺՅԱԼԵՐԻՒ ՎԱՐՈՂՈՒՄԸ

Բնենուի շրջությանը ներկայացված չէին առ լը
(բնութեան 120^ւ սիմեոն), ժյաւրին վարուսում եւ .

1. Խառնին մրցանակ չհատկացնել, նկատեն ունենայով այն և աղբամաները, վոր ներկայացված պիտեաների մեջ չկան կառավարական մրցության պահանջներին լիսովն բավարարող պիտեաներ :

2. Մրցությանը ներկայացված պիտեաներից լավագույն պիտեաներին հատկացնել :

Յերրորդ մրցանակը .

1. Ա. Կիրշոն—«Հրաշալիք ձուրիվածք» :

2. Ա. Կորնիջոնի—«Էսկապրայի կործանումը» :

Յերրորդ մրցանակը .

1. Բ. Շոմաշոն—«Մարտիկներ» :

2. Ա. Զամոնին—«Շահնշահել» :

3. Խ. Կոչերգա—«Ժամագործ և Հայր» :

Համաճարարել թիմադրության .

1. Բիլլ-Բելլոցերիովսկի—«Ելյանը կանչում ե» :

2. Գլեբով—«Աշխարհի վերակառուցողը» :

3. Կարավական—«Իր առւներ» :

4. Ազուե—«Ինչպես և նրա անունը» :

5. Հել՛ֆանի—«Աստվածուհին պոկում և աչքակառը» :

6. Հելուստան—«Ժամանակավոր կառավարությունը» :

7. Գալ'չենիու — «Մաժոր» :
 8. Բոլան — «Մարդիկ» (ոսեթական լեզվով) :
 9. Ռամանով — «Փող» (թաթարական լեզվով) :
 10. Կոլոմիյցե — «Ալմաստյա բերդ» :
 11. Պիետնյով — «Գլխարկ» :
 12. Լեվին — «Հինդ պոչի ալատմությունը» :
 13. Պերսոնով — «Սեփականություն» (գյուղական թատրոնների համար) :
 14. Նովոսելով — «Վար» (գյուղական թատրոնների համար) :
 15. Դ. Շչեգլով — «Ճեղքված աշխարհ» (ալատանեկան թատրոնի համար) :
4. Բեմադրության համար վոչ պիտանի, բայց նրանց հեղինակների չնորդը հայտարերող պիեսները հետաղա վերամշակման համար հանձնել ԽՍՀՄ խորհրդակային դրույների Միության կազմկոմիտեյի դրամատուրգների ինքնավար սեղյալային, հետաղա աշխատանք տանելու հեղինակների հետ :
5. Մրցությանը ներկայացված մի շարք պիեսներ՝ մանրադինին քննության առնելուց հետո, հրապարակելու պիտանի և բեմադրության հանձնարարելի աշխատությունների լրացուցիչ ցուցակ :

Ժյուրիի նախագահ Ա. ՍՏԵՂԿԻ
 Ժյուրիի անդամներ՝ Ա. ԲՈՒԲՆՈՎ,
 ՅԵ. ԼՅՈՒԲԻՄՈՎ-ԼԱՆՍԿՈՅ, ԱԼԵՔ-
 ՍԵՅ ՏՈԼՍՏՈՅ, Վ. ՄԵՅԵՐԻՈԼԴ, Ի.
 ԿՈՒԼԻԿԻԿ, Ո. ԼԻՏՈՎՍԿԻ, Վ. ՎԼԱԴԻ-
 ՄԻՐՈՎ, Ռ. ՍԻՄՈՆՈՎ, Ի. ԳՐՈՆՍ-
 ԿԻ :

ԼԵՎԱԴԻԱՆԻՑՆ ՊԻԵՍՆԵՐԻ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պրոֆեսիանալ գրամառաւրդների, ակումբների աշխատավորների, ճարաւարապետների, բանվորների, կոլտնտեսականների, զյուղատնտեսների գրած հաղարյերկու հարյուր պիես եր ներկայացված ԽՍՀՄ ժողով 1933 թ. փետրվարի 17-ի հայտաբառ մրցությանը։ Դրանք հարյուրավոր նոր թևաններ են, վերցրած մեր հսկայածավալ յերկրի կյանքից, այլտեղ կաեւ հեռավոր Հյուսիսի կենցաղը և կովկասյան ժողովուրդների կյանքը, պայքար կուլտակության գեմ և պայքար տիրապետելու ինպուտարիսալ տիտաններին, զյուտարարական ստեղծագործություն և մանր-բուրժուական ինտելիգենցիայի վերափոխում, աշխատանքը ձենորսական կոլտնտեսություններում և կոլչակովչինայի քայրայումը, մեր յերկրի յեռուն առարյան և Ամերիկան՝ անցյալ զարի վերջում, —զժվար և անզամ պարզապես թվել մրցության ընդդրկած թևանների հոկայական բազմազանությունը։ Խորհուրդների յերկրի բոլոր ծայրերից սաացվում եյին պիեսներ սուսական, ուկրայնական, բելառուսական, հայկական, ռուսական, պամարական, հրեական, ուղմուրական, դերմանական, անդլիական և հունական լեզուներով։

Մըցությունը մասսայական դրական չարժման
նոր ալիք առաջ բերեց, նա ոժանդակեց և հայտ բե-
րելու տասնյակ նոր և հաճախ տաղանդավոր յերիտա-
սարդ գրողներ, վորոնք իրենց վրա համառ աշխա-
տանք տանելու գեագում կարող են խեկական դրամա-
տուրդիական գործեր ստեղծագործել: Մըցության ար-
դյունքը յեղալ, վոր մեր դրամատուրդիայում հայուն-
վեցին նոր անուններ և նոր աշխատություններ, ինչ-
պիսիք են Զանանի «Շահնամե»-ն, Գալչենկոյի «Մա-
ժորշ-ը», Կոլոմիյցեի «Ազմասայա բերդը» և այլն:

Մըցությանն ուղարկված պիեսների բնորոշ հատ-
կությունը ժանրերի և զեղարվեստական ձևերի՝ այն
բազմազանությունն է, վորով դրված են նրանք:
Պարզմատրված են և հանձնարարված բեմագորության
դրամաներ, կոմեդիաներ, վոդքերգություններ, պատ-
մա-ժամանակադրական պիեսներ և եպոպեյներ, վո-
րոնք ընդգրկում են Հոկտեմբերյան հեղափոխության
մօմբողջ պատմությունը: Վորոշ պիեսների թեմաների
մշակումը (ինչպես, որինակ, «Ժամագործն ու հա-
վը», «Շահնամե») ցույց էն տալիս, վոր մեր մի շարք
դրամատուրգներ հաջող կերպով տիրապետում են դր-
ամատուրդիական տեխնիկայի արվեստին և սկսում
են իրենց պիեսները կառուցել որիցինալ ձեռվ, բարդ
ինստրումենտ և հրապուրիչ սյուժեյով:

Մըցությանն ուղարկված են յերկու տասնյակից
ավել պիես գրված չափածո, վորոնց մեջ կան, անտա-
րակույս, վարպետորեն գրված պիեսներ: Այս նույն-
պիս վկայում ե մեր դրամատուրդիայի զեղարվեստա-
կան կուլտուրայի վերելքը, վորովհետեւ չափածո
պիեսն ամենից զժվար ձևն և դրամատուրդիական

առեղծագործության մեջ, վորոր մինչեւ այժմ շատ քիչ է հաջողին մեր դրույներին:

Մըսությանն, անսարսելուց, շափազանց դրական դեր խոզաց մեր դրոր - դրամատուրգների ստեղծագործության մեջ, նույնուն առաջ քերեց դրամատուրգների մեջ ստորևս, աշխատանք տանելու լունց պրա և դրամատուրգների մեջ ամբողջովից որոշականացնեց համախռնապատճեն դրացումը հանգելով պրոլետարիատի դիսուլի և պաղօք խորհրդացին համարկացնելության՝ իրենց աշխատանքների համար:

Մըսությանն աղարկված պիեսների մեջող մեծամասնությանը դրված և համարկելու մըսության համար: Գնայած Համեմատաբար կտրած մատնակամիջոցին (ութ ամիս), վոր ամած եր, մըսությանն ի հայր քերեց մի շարք հետաքրքիր, քաղաքականացին ականուալ և գեղարվեստականորեն լավ պործեր:

Մեր քննադատության դորձը պիստի հոնդիսանա ուսումնասիրելու և սկայական և մասայական ստեղծագործության փորձը, ողնել դրամատուրգիային լրութիվ կերպով յարացնելու այն արժեքավորը, ինչ արդից եւս միաւթյան ժողովրդական կոմիտարեների Առաջնորդի այս, իր թափառ արտասահմար մըսությունը: Առաջնորդային դրամատուրգիան, ինչպես այդ ցույց և առաջին մըսության արդյունքը, շափազանց աճել և այն յերկու տարիների ընթացքում, վոր անցել է Համել(ր)ե կեցի 1932 թ. առողջի 22-ի պատմական վորոշումից հետո: Բազմադան և դարձել թեմատիկան, ականուալ պրարիվները մշակվում են ամենի խոր, հրապարակ յեկան որիունայ և իր ժանրով նոր աշխատանքներ: Դիմումուն այն և, վոր առաջ-

տար են հանդիսացել և ստեղծագործականորնն առավել խորունկ մշակման են յենթարկվել այն թեմաներն ու պրոբլեմները, վորոնք առաջադրվել են մեր ներկա ժամանակի կողմից, թեմաներ, վորոնք արտացոլում են սոցիալիզմի նոր աշխարհի համար լայն մտսահերի մղած պայքարը:

Մեր դրամատուրգիան, իր բոլոր, անվիճելի հաջողություններով հանդերձ, դեռևս բավարար չափով չի հաղթահարում այն հսկայական խնդիրները, վորոնք դրվում են նրա վրա այն հանդամանքով, վոր նա Խորհուրդների յերկրի դրամատուրգիա յէ, պրոլետարական պետության դրամատուրգիա: Մենք դեռևս չունենք առաջնակարգ պիեսներ, վորոնք իրենց գաղափարական և գեղարվեստական նշանակությամբ արժանի լինելին մեր մեծ դարաշրջանին: Այդիսկ տեսակետից հենց մրցության ժյուրին հնարասվոր չհամարեց առաջին մրցանակը տալ: Այս փաստից խորհրդային դրամատուրգները պետք ե իրենց համար լուրջ յեղբակացություններ անեն: Հարկավոր ե ե'լ ավելի լարված աշխատել, հարկավոր ե ե'լ ավելի լավ ուսումնասիրել կյանքը, հարկավոր ե ե'լ ավելի ակտիվ մասնակից լինել սոցիալիստական շինարարության, հարկավոր ե ե'լ ավելի խորը տիրապետել Մարքս - Ենդելս - Լենին - Ստալինյան հաղթական ուսմունքին:

Մրցության ժյուրին մատնանշում ե, վոր դրամատուրգիան դեռևս շարունակում ե յետ մնալ սոցիալիստական շինարարության տեմպերից և դրամատուրգներին կոչ ե անում շարունակել պայքար

մղել բարձր դեղարվեստական վորակի, իրապես, մեծ
արվեստի համար:

Յերկրորդ և յերրորդ մրցանակների արժանացել
են այն պիեսները, վորոնք ունեն նշանակալից թե-
մատիկա, գաղափար և դեղարվեստականորեն հետա-
քրքիր ճեավորում: Վո՞րոնք են այդ պիեսները:

Կիրշոնի «Հրաշալի ճուլվածքը»— կոմեդիա, վորի
հիմքում պատկած և ողաղնացության արդյունաբե-
րության մեջ չափազանց մի կարևոր գյուտարարու-
թյան համար մղվող պայքարը: Ողագործելով այդ
նյութը և նրա վրա հետաքրքիր սյուժե կառուցելով,
Հեղինակը, առանց խոշոր սրբորեմատիկայի մեջ ընկ-
նելու, կարողացել է ցույց տալ մեր յերիտասարդու-
թյան տիսպերի մի ամբողջ զալերեա: Կիրշոնի գծագը-
րած որբազները չափազանց մեղմ են, լիրիկական:
Պիեսայում շատ կան ուրախ կոմեդիական դրություն-
ներ և դրված և սրամիտ լեզվով:

«Հրաշալի ճուլվածքը» մեծ աշխուժությամբ, լա-
վատեսությամբ և կենսախնդությամբ հաղեցված-
պիես է:

Ա. Կորնեյչովի, «Եսկադրայի կործանումը» պիե-
սի Հեղինակը, ուկրայնական յերիտասարդ դրամա-
տուրդ և, կոմյերիտական և կուտակցության թեկնա-
ծու, վորի պիեսները բնմադրվում են Ուկրայնայում
և ՌՍՖՍՀ-ում: Նրա նոր պիեսն, անտարակույս, ար-
դյունք և աճող վարպետության: Թեման վերցված է
Ուկրաինայի բազաքացիական կոլիզներից (Սկզբով յան
նախատերմի: խորաակումը): Չափազանց լարված դրա-
մատուրդիական լիարիդայում հեղինակը կարողացել է

ցույց տալ ուկրայնական նացիոնալիզմի պետույսութով՝
յան դեմքը, մեծ ջերմությամբ դուրս բերել խորհրդ-
դային օրբազները։ Այս պիեսը պատմա-հեղափոխա-
կան լավագույն պիեսներից մեկն եւ հանդիսանում։

Նրա խոշոր և անտարակույս արժանիքը, բայց
նրա գեղարվեստական համելություններից, հանդի-
սանում եւ այն, վոր նա ուժգին հարված եւ հասցնում
ուկրայնական աղջայնականության և դիտողներին
դաստիարակում եւ պրոլետարական ինտերնացիոնա-
լիզմի վորով։

Եերբորդ մրցանակն ստացավ Ռոմաշովի «Մար-
տիկներ» պիեսը։ Պիեսը հաջող փորձ եւ ցույց տալու
կարմիր բանակի հրամանատարներին ուսման ժամա-
նակ, խաղաղ պայմաններում։ Դա առաջին լուրջ
պիեսն եւ այդ թեմայով, գրված եւ պարզ, անբռնազ-
բռնիկ և կառուցված եւ հետաքրքիր նյութի վրա։

Պիեսում դուրս բերված հրամանատարների՝ կու-
սակցական և անկուսակցական՝ որբազները համոզիչ
են և կենսական։ Պիեսան ընդհանուր առմամբ խո-
սում եւ մեր կարմիր բանակի հզորության և առանձ-
նապես նրա հրամանատարների և զեկավարության
բարձր վորակի մասին։

«Շահնամե» պիեսը պատկանում եւ Հայաստանի
ԽՍՀ վաստակավոր գերասան Մ. Զանանին և գըր-
ված եւ հայերեն լեզվով։ Պիեսի սյուժեն պատմական
է։ Հեղինակն ողտագործել եւ արևելյան հեքիաթ-
ների նյութերը։ Համարյա հեքիաթային ձևով հեղի-
նակը պատմում եւ իրանում յերեք «ատարբեր» քաղա-
քական որիենտացիայի տեր շահերի թագավորելու
պատմությունը։ շահ, վոր հովանավորում եւ ֆե-

դալներին, շահ «ազատամիտ», վոր վորքում և հենավել մանր բուրժուազիայի վրա և ֆաշիստական տիպի շահ։ Դրանց բոլորի դեմ դուրս եւ դալիս կուլաբը, հանձննա վորի մարմարվորվում են աշխատավորների և ճնշվածների ճգտումները և հույսերը։ Պիեռում չափազանց նրբորեն ցույց եւ տրված, վոր Իրանի և նրա շահերի տերը հանդիսանում եւ անգիտացի Բալիբողը։

Ուստաղործելով լեզենդայի նյութը, հեղինակը կարողացել է տալ Արևելքի ճնշված մասսաների կյանքի վառ պատկերը։ Զանանի պիեսը բեմականորեն չափանց և ֆեկտավոր է և գրված եւ սքանչելի բանաստեղծական լեզվով (բիթմավոր արձակ)։

«Ժամապործը և հավրա պիեսի հեղինակը՝ Ուկրայնայի հին դրամատուրգ՝ ի. Կոչերգան ՌԽՍՖՀ միանդամայն անձանոթ եր։ «Ժամապործը և հավրա որիգինալ և կենդանի կառուցված պիես եւ բոլշևիկյան ժամանակների և բոլշևիկյան տեմպերի մասին։

Չորս դործողության ընթացքում հեղինակը ցույց է տալիս նույն մարդկանց նույն յերկաթուղային կայտրանում, բայց տարբեր տարիներում (մինչզատերադյան, քաղաքացիական կոմի և մեր որերին) բնօմական մի շարք բարդ գրությունների միջոցով, վորոնց մեջ շատ կոմեդիական, լիրիկական և պաթեթիկ դրություններ կան, հեղինակը հաստատում է սոցիալիստական դարաշրջանի հաղթանակը, բոլշևիկյան աեմպերի հաղթանակը։ Պիեսում ցույց եւ տրված նաև բանվոր դասակարգի հերոսությունը քաղաքացիական կորիզների տարիներում և սոցիալիստական շինարարության եպօխայում։

Հանձինս գերմանացի «Ժամադործի», ժամացույցի խոշոր Փիրմայի ներկայացուցչի, ոլոր մնացել և մոռւսաստանում, հեղինակը յուրահատուկ և որիգինալ գույներով այլաբանում և բուրժուական կարգերի անկումը: Պիեսում կան բազմաթիվ կոլորիտային պատկերներ և դեմքեր, բարդ հետաքրքիր ինտրիգա, վորովիկան:

Մրցանակի արժանացած պիեսներն, անտարակույթ, հանդիսանում են ներկայիս խորհրդային դրամատուրգիայի լավագույն որինակները:

Նախ և առաջ մեր գրամատուրգիան զարգանում և միակ ճիշտ բեալիտատական ճանապարհով, ամենելիյն չըրաժարվելով վոճի, ձեմի և ժանրերի բազմազանությունից և միաժամանակ չընկնելով դաեհիկ և օլույզար կենցաղագրության գիրկը: Սոցիալիտատական բեալիոգմը, վորին ձգտում են տիրապետել մեր դրամատուրգիները, գեղարվեստական արտահայտությունների, ժանրերի և թեմաների մեծագույն բազմազանություն և ընծեռում: Այդ բազմազանության առկայությունը մենք ունենք նաև մրցությանն ստացված ոլիեններում:

Այլամակած և նաև, վոր խորհրդային դրամատուրգիան հաջող կերպով ազատագրվում և սխեմատիզմից, հասարակացումից, վորոնք դեռևս նորերու հատուկ եյին նրան:

Համեկ(բ)կ կե-ի 1932 թ.-ապրիլի 23-ի պատմական վորոշումն ազատեց դրամատուրգիատիկան ստեղծագործություններ սխոլատիկայի, վերացականության և խմբակային դրամատիզմի ուղիներից, դրամատուր-


ների առաջ բաց անելով հետագա աճման հսկայական հեռանկարներ :

Մը ցության ամփոփումն այդ վերելքի առաջին ակնհայտ արդյունքն եւ : Մը ցությունը գրական-դրամատիկական ստեղծագործության բնագավառ գրավեց հարյուրավոր նոր մարդկանց, դրամատուրգիան լայն մասսաների սեփականություն դարձնելով :

Դրականությունը և արվեստը մեր յերկրում պետական հսկայական նշանակություն ունեցող գործ եւ : Նա կոչված է դաստիարակելու աշխատավորներին կոմունիզմի վորով, նա կոչված է պայքարելու նոր, սոցիալիստական մարդու ձեակերպման համար : Մը ցությունն ընդդժեց այդ հատուկ վորոշակիությամբ :

Խորհրդային դրամատուրգիան պետք է արժանի լինի կուսակցության 17-րդ համագումարի կողմից իր վրա գրված պատմական խնդիրներին : Դրա համար կան ամեն տեսակ հնարավորություններ լենինյան կուսակցության և նրա հանճարեղ առաջնորդ ընկ-Ստալինի դեկավարությամբ անդասակարգ, սոցիալիստական հասարակություն կառուցող յերկրում :

Մը ցության ժյուրի — Ա. ՍՏԵՑԿԻ, Ա. ԲՈՒԲՆՈՎ, Վ. ՄԵՅԵՐԻԱՆԻ, ԱԼԵՔՍԵՅ ՏՈՂՏՈՅ, Ի. ԿՈՒԼԻԿ, ՅԵ. ԼՅՈՒԲԻ-ՄՈՎ-ԼԱՆՍԿՈՅ, Ի. ԳՐՈՒՍԿԻ, Ռ. ՍԻ-ՄՈՆՈՎ, Ո. ԼԻՏՈՎՍԿԻ, Վ. ՎԼԱԴԻՄԻ-ՐՈՎ



Կնոջ՝ ըմկերպո՛ ժամանակն է
Տվիրված իմ այս աշխատաւրյաւմք:
Մ. ՀԱՆԱՆ

ՇԱՅՆԱՄԵ



ՄԻ ՔԱՆՈՒՆԻ ԽՈՍՔ


Թատերական այս յերկի վերնադիրը «Շահնամե»-նշանակում և շահադրություն, պետք և կարդալ չակերտների մեջ։ «Շահնամե»-ն պատմական յերկ և միայն այն չափով, վոր գեղաքերի մեծ մասը քաղված և իրանի պատմագրերից ընդհանրապես։

«Շահնամե»-յի փարուլան կազմելիս, ոգտագործված են նախորդ դարերի մի շարք դրոշների և պատմիչների գործերը, ինչպիսիք են՝ Ֆ. Ախունդով, Առաքել Դավթիմեցի, Հակոբ Ջուղայեցի, Հ. Արարատյան, Զաքարիա վարդապետ, Ջոն Մալկով, Գարդան, Լուցերու և այլն։

«Շահնամե»-յում պատմական Փոնը լոկ գեղարվեստական միջոց և արևելյան յերկրների սոցիալ-քաղաքական և ժամանակակից մի շարք հարցերի շուրջ հրապարակով մտածելու։ Այդ պատճառով ել, գործող անձանց անունները թողնված կամ ընտրված են միայն թագավորական առաջադրություններով։

«Շահնամե»-ն դրված և, մեծ մասամբ, հնգոտանի չափածո արձակով։ Այդ չափը միշտ չե պահպանվում, չողնեցնելու համար թատրոնական հանդիսականի լսողությունը։

Յուրաքանչյուր թատրոնական յերկ— ինչքան ել նա բաղմից մշակված լինի— կարոտ և, փորձերի և ժամանակի ընթացքում, վորոշ փոփոխությունների և կրնատումների՝ ներկայացման տեսդության նորման չափը և ամբողջականությունն ապահովելու համար ։



ԵԱՀ ԶԵՅԻՐ

ԱԽՈՒՆԴ ՍՍՄԱԴ — ավագ մոլա
 ՄԻՐՉԱ ՄՈՒՇՏԱՐ — իսղնադար
 ՄԻՐՉԱ ՄՈՒՀՍԻՆ — վեղիր
 ԶԱՄԱՆ ԽԱՆ — դյխավոր հրամանատար
 ԱԶԲՄ ԲԵԿ — շահէ անձնապահ զորական
 ԽՈՉԱ ՄՈՒԲԱՐԵՔ — ներքինապետ
 ՄՈՒՖԱԴԴԱԼ — յերիտասարդ ներքինի
 ՄԵՎԱԱՆԱ ԶԱԼԱԼԵԴԴԻՆ — ծերունի աստղադետ
 ՍԱԴՐԵԴԴԻՆ — ավագ աստղադուչակ
 ՅՈՒՍՈՒՖ — Միբղա (նամակներ և խնդրադրեր գը-
 րող, մտավորական)

ԵԵՐՈՒՆԻ ԱՇՐԱՅ

ԶԵՄԻԼ

ԹԱՄԱԶԱՆ

ԿՈՒՐԲԱՆ

ԶԵՐԻ

ԺԱՃԱռականներ

ԿՈՒԼԱԲ — նախկին վորմնադիր, ժողովրդական հե-
 րոս

ԵԱՀՐՈՒՀ ԽԱՆ — նահանգապետ զորական

ՖԱՄԲԱԶ ԽԱՆ

զորականներ

ԵԱՔԻՐ ԽԱՆ

զորականներ

ՍԵՅԻԴ ԱՄԱՆՈՒԼՂԱԶ

ՍԵԼՄԱ ԽԱԹՈՒԻՆ — Թաղուհի Թաղուհյաց

ՆԱԶԼՈՒ ԽԱԹՈՒՆ

ՖԻՐՈՒԶԱ ԽԱԹՈՒՆ՝ } սլալատական կանայք

Պալատականներ, հարեմուհիներ, արհեստավորներ, գյուղացիներ, վաճառականներ, աղնվականներ, վաճառորդներ, զնողներ, դորգ գործող կանայք, ներքինիներ, զինակիրներ և այլն։

ԴԵՊՔԵՐԸ ՏԵՂԻ ՅԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ 18-ՐԴ ԴԱՅԻ
ՎԵՐՁԵՐԻՆ, ԻՐԱՆՑԱՆ ԱՇԽԱՄՀՈՒՄ։

Գ Ր Ո Լ Ո Գ

Պալատական տատղադիտարան՝ բարձր աշտարակ-
մերով. գետեղված են խոշոր հեռադիտակներ : Ասո-
դարաշխմերը դիտում են աստղերի շարժումը : Ներ-
մեռում աշտարակի մի խուց, տեղ-տեղ ծածկված խո-
րասանի կապույտ և սպիտակով գործված խալիչանե-
րով : Խտած են վանառականներ՝ ԶԵՄԻԼ, ԿՈՒՐԲԱՆ,
ԹԱՄԱԶԱՆ, ԶԵՔԻ, ծերութի ԱՇՐԱՖ :

(Լոռուր-յուն ե) :

Ներս և մտնում իմաստում շուրջ ավագա-
գույն աստղագետ ՄԵՎԼԱՆԱ ԶԱԼԱՆԵԴԻՆ-
ՆԻ : Բոլորը վատքի, բացի ծերութի Աշրաֆից :
Մեվլանան կենտրոնում իր տեղն և գրավում, դի-
տում բոլորին և հետո —

ՄԵՎԼԱՆԱ — ԶԻ՞ յԵԿԵԼ ՅՈՒՍՈՒՖը :

ԲՈԼՈՐԸ — Դեռ վոչ :

ՄԵՎԼԱՆԱ — Տարորինակ ե...

Մանր լոռուր-յուն : Վերևի աշտարակից յեր-
կու աստղադիտ Մեվլանայի մատ :

Ա. ԱՄՏԴ — Հայտնում ենք ավագագույնին, վոր

աստղերի ընթացքի մեջ փոփոխություն և յերելում:

Բ. ԱՍՏՀ. — Խնդրում ենք ավագագույնից, շնորհը բերել և յերեւույթն ստուգել:

Մեվլանան զնում և և կենտրոնական մեծ դիտակով զնում յերկինքը:

ԹԱՄՄՁԱՆ. — Մռայլ և Մեվլանան այսոր և խորհըրդական:

ԿՈՒՐԻՖԱՆ. — Նա վրդովյալ և ի ներքուստ:

ԶԵՄԻԼ. — Բայց նա խաղաղ և յերեւում:

ԱՃՐԱՅ. — Այդպես և մեծ բնությունը, մեծ փոթորկի ոկորին:

Մեվլանան վերադառնում և, նատամ և դիտում քոլորին: Լուրջում:

ՄԵՎԼԱՆԱ. — Զեկա՞վ Յուսուֆը:

ՅՈՒՍՈՒՖ. — (Մտմելով) Այստեղ եմ, Մեվլանա:

Խոմարիվում և և եամբուրում Մեվլանայի զգեստի ներքեաի ծայրը:

ՄԵՎԼԱՆԱ. — Նստեցե՞ք (լուրջում). Կորիվը վերջացավ:

ԲՈԼՈՐԸ. — Արդե՞ն: Ինչպե՞ս:

ՄԵՎԼԱՆԱ. — Ղաթրըի Ռուի Բեքիր փաշայի առաջնորդությամբ, ոսմանյան զորքը մոտ յոթանասուն հազար կլիներ: Կարող եյինք մենք փառավոր կովել, բայց Շահ Զեյիրը հրաման եր ճամբել տասնհինգ որվա տարածության վրա դյու-

զերն այրել, ցանքերը վառել, նախիրները քշել,
քանդել կամուրջները և փչացնել ճանապարհնե-
րը: Ասմանցիները հասնելով Թավրիդ, վոչինչ
չպտան ուսուլով՝ վոչ յեղ, վոչ վոչսար... Յերեք
որ հետո, տխուր, հիասթափ, թմբուկի զար-
կով, Բեքիր փաշան սկսեց հետ շարժվել: Ահա
թե կախին ինչպե՞ս վերջացավ:

ԶԵՄԻԼ — Այսքա՛ն ել աղետ, այսքա՛ն ել չարիք:

ԶԵՐԻ — Վերջին յերաշտից և ջրի սակավությունից
ըրջակա ցանքերն ել փչացան:

ԿՈՒՐԻՋՆ — Կամուրջներն ավերակ, ճանապարհները
փչացած... Ել վոչ մի կարավան ապրանք չի կա-
րող բերել Պարսկաստան:

ՔԱՄԱՉԱՆ — Յեկ ժողովուրդը, քաղցած ու տկլոր,
կկուտրովի սովոր:

ՅՈՒՍՈՒՅ — Թաղավորն ե, թաղավորն ե պատ-
ճառ: Կուրացել ե արյունով... Կարելի յեր դքախ-
ախ վերածել այս յերկիքը, յեթե թագաժառանդը
լիներ թագավոր — շինել կտար բաղմաթիվ նոր
ճանապարհներ, կկառուցեր կամուրջներ ու քար-
վանսարայներ, կքաջալերեր դիտնական մարդ-
կանց, վաճառականներին և ժողովրդի հետ մի-
ացյալ ուժով, կծաղկեր յերկիքն: Իսկ Շահ Զե-
յիրը հափշտակում ե յերկիքի, իոլորի, հարց-
տությունը. անարդար տուրքեր, բռնություն,
արյուն: Պաշտոնեյությունը, մեծից մինչև
փոքր, տողրում և կաշառքով:

ԱՇԲԱՖ — Յավին այնքա՛ն ե շատ, վոր ժողովուրդն
այլևս չի լալիս... Ասել ե՛ Շահ Զեյիրն ել յեր-
կար չի՛ ապրի:

ՄԵՎԼԱՆԱ.— Յեվ չի՛ ապրելու:

ԲՈԼՈՐԸ.— Այսի՞նքն:

ՄԵՎԼԱՆԱ.— Նրա մահվան լուրը կստանաք քիչ հետո. դրա համար ել կանչել եմ յես ձեզ:

ԲՈԼՈՐԸ.— Ինչպե՞ս:

ՄԵՎԼԱՆԱ.— Յերբ դավադրությունն իր մոայլ ունեցը կփոխի պայծառ հերոսության, պետք և զորոտան թնդանոթները. յուրաքանչյուրդ ալետք և վոր մտնեք ժողովրդյան մեջ և վողեորիչ խոսքերով նրան հուզեք, համոզեք:

Ծանր ու ահավոր քակվում ե դաւը յերկարյա քակով: Բոլորը վստիի. մտնում ե այլազ աստղագուշակ Սադրեդդինը, ընկնում ե Մելլամայի վստիերին: Լուռ ե:

ՄԵՎԼԱՆԱ.— (Խուլ ճայնով) Խոսի՛ր... (լուրյում):
Վեր կաց և խոսի՛ր:

ՍԱԴՐԵԴԴԻ.— Դավադրությունը բացվեց, Մելլանա...
Մատնություն... Թագաժառանգն ու առոնչինդ դավադիրներ, կալանքի տակ են... Յես թողի պալատն ու վաղեցի քեզ լուրը հայտնելու:

ՄԵՎԼԱՆԱ.— Իսկ թագուհի թագուհյաց Սելմա խաթո՞ւնը:

ՍԱԴՐԵԴԴԻ.— Յերկու որ առաջ, յերբ Շահ Զեյիրն ինձ իր մոտ կանչեց, վորպեսզի նրան շփոթեցնեմ՝ հայտարարեցի թագուն, մոտալուս մի դավադը բություն՝ Սելմա խաթունի կողմից սարքաված: Սելմա խաթունը, անտեղյակ այժմ գործոց ընթացքից, դեռ լրտեսներով շրջապատված ե:

ՄԵԴԱԱՆԱ — (Բոլորին) Գնացե՛ք, ցրվե՛ք և պատ-
րաստվեցե՛ք մի նոր գալիքի:

Բոլորը մեկնելու յեն պատրաստվում:

Յուսումնական, վարդյակ իմ, դու մի քիչ մնա՞ :

Գնում են: Յերկու աստղադես գալիս են
նորից:

Ա. **ԱՍՏԴ** — Ավաղաղույն, Հրատը մոտեցավ Կարե-
ճին:

Բ. **ԱՍՏԴ** — Ավաղաղույն, Կարիճը մոտեցավ Հրա-
տին:

ՄԵԴԱԱՆԱ — Ավաղ աստղագուշակ Սաղբեղդին,
գիտի՛ր, ստուգի՛ր:

Սադրեդինը գնում է յերկուսի հետ:

ՄԵԴԱԱՆԱ — Լոխի ինձ, Յուսումնական, յերկը-
նի անցուղարձերը զուգաղիսում են... Կարիճն
և Հրատ հույժ մոտենում են... Նշանակում ե
թաղավորների մեջ փոփոխումն... Կարող ե լի-
նել, վար դու խիստ չուտով թաղավոր դառնաս...
Եւթե Սաղբեղդինն ինձ հետո միանա, իմ նոր
ծրագրին...

Յերկու աստղադեսները գալիս են շտապ:


Ա. **ԱՍՏԴ** — Ավաղ աստղագուշակ Միրզա Սաղբեղդի-
նը խնդրում է գիտել աստղերին:

Բ. **ԱՍՏԴ** — Ավաղ աստղագուշակ Միրզա Սաղ-
բեղդինը խնդրում է ավաղաղույնից շտապել:

Մելլաման գնում ե:

ՅՈՒՍՈՒԹ — (Մենակ): Այս մռայլ վայրում, մռայլ
ցնորքներ են ինձ թելադրում, մարդիկ, վորոնք
միշտ յերկնի աստեղաց հետ կապ են պահպա-
նում... Թաղավոր լինել... ինչքա՞ն ե հեռու իմ
յերաղանքից... Թե՛կ... չի լինի... հիմար զա-
ռացանք, շփոթի պրդյունք... Բայց ինչո՞ւ ա-
սագ այստեղ Մելլանան իմ ընկերներին. «Պատ-
րաստվեցեք մի նոր գալիքի»...

Մքնում ե:



ԱՌԱՋԻՆ ԱՐԱՄՎԱՌ

Պալատի դահլիճն : Ներքինապես Խոզա Մուրաբեքը մեմակ նստած , կարծես նիրիում ե . հանկարծ , մտնում ե ներքինի Մուֆադդալը :

Խ . ՄՈՒԲ — (Ընդուստ) Ո՞վ ե :

ՄՈՒՖԱԴ — Յես եմ , Մուֆադդալը :

Խ . ՄՈՒԲ — Ինչո՞ւ յես գումատ :

ՄՈՒՖԱԴ — Թագուհի թագուհյաց Սելմա խաթունը ...

Խ . ՄՈՒԲ — Ի՞նչ :

ՄՈՒՖԱԴ — Պահանջում ե ...

Խ . ՄՈՒԲ — Խոսի՞ք :

ՄՈՒՖԱԴ — Իր մոտը բերել թագաժառանդ իշխանին :

Խ . ՄՈՒԲ — Անկարելի յե ... թագաժառանդը ձերբակարված ե մեծ շահնշահի հրամանովը : Այդպես ել հայտնիր Սելմա խաթունին :

ՄՈՒՖԱԴ — Շատ լավ , կհայտնեմ (յերկու քայլ) , բայց ահա ինքը , Սելմա խաթունը :

Մումում ե քագուհի քագուհյաց Սելմա խաթունը : Խ . Մուրաբեքն ու Մուֆադդալը խոնարիվում են :

ՍԵԼՄԱ. — (Մուֆադդալին) Մի պահ առանձին թող
մեղ, Մուֆա՛դդալ:

Մուֆադդալը հեռանում է: Սելմա խաբումը
դիտում է և. Մուրարեֆին:

և. **ՄՈՒԲ. —** (քազմիցս խոնարեվելուց հետո) Թա-
գուհիների թագուհու համար ամեն վրդովմունք
հասկանալի յե:

ՍԵԼՄԱ. — Քե՞զ և հանձնված իմ միակ վորդու պահ-
պանությունը...

և. **ՄՈՒԲ. —** «Պահպանությունը... Այդ լավ եր
ասված... Մեծ և անսասան և կամքն արքայի,
ո՞վ իմ թագուհի:

ՍԵԼՄԱ. — Այսպիսի դեսպում իմ կամքիցն ավել
մեծ և անսասան վոչինչ չպետք ե լինի, լսեցի՞ր,
Խոջա Մուրարեփ:

և. **ՄՈՒԲ. —** Լսողությունս դեռ չի փչացել կարծեմ,
թագուհի:

ՍԵԼՄԱ. — Ուրեմն լսիր. մեծն իրանի մեծաղույն
առհմի գուասքն եմ յեղել յես, պալատ եմ յե-
կել ժառքով ու գանձով, Զեյթը արքայի առաջին
կինն եմ, վոր ընծայել եմ նրան մի վորդի, թա-
գաժառանդին, վորն այժմ հոր կամքով և սխա-
լանքով բանտարկված ե:

և. **ՄՈՒԲ. —** Անսխալական և կամքն արքայի, ո՞վ իմ
թագուհի:

ՍԵԼՄԱ. — «Ո՞վ իմ թագուհի, ո՞վ իմ թագուհի...
Եւ մի՛ անվանիր զու ինձ թագուհի. ներքինի յես
զու, զբկված հավերժ, ծնող լինելու մեծ զզացու-
մից, քայլ ասա՛ զու ինձ, մայր չե՞ս ունեցել...

յես մայր եմ այժմ և ուրիշ վոչինչ։ Ուզում եմ,
ուզում, ուզում եմ տեսնել, խոսել վորդուս հետ։
(Խ. Մուրարեքն անշարժ և լուս ե)։ Լսի՛ր, Մու-
րարեք, չեմ վախեցել յես կյանքում վոչ վոքից
և պարզ ասում եմ, յեթե իմ վորդուն մի բան
պատահի, ել մի՛ մտածիր վոր քո գլուխը ուսե-
րիդ վրա կանդնած կլինի։

Խ. ՄՈՒԲ. — (Անհանգիստ) Յես ինչացո՞ւ յեմ այսո-
տեղ, տիրուհի, վեհապետական կամքին հնա-
զանդ հլու մի դործիք… Ի՞նչ եք ուզում, ի՞նչ,
ինձնից, տիրուհի…

ՍԵԼՄԱ. — Տեսնել իմ վորդուն և դրա համար ինձ-
նից կարող ես ստանալ ընծառ և վարձատրու-
թյուն (վզից հանում և մարգարտյա մանյակը և
տալիս)։

Խ. ՄՈՒԲ. — Մի բողե միայն… Թե հնար լինի, լու
կյանքի գնով, ի կատար կածեմ տիրուհուա կամ-
քը, սակայն մի պայման…

ՍԵԼՄԱ. — Ի՞նչ պայման, ասա, ասա՛ միայն չուտ։

Խ. ՄՈՒԲ. — Իսկույն հեռանալ, յերբ վոր արքայի
գալուստն հայտնեն։

ՍԵԼՄԱ. — Լավ, խոստանում եմ։

Խ. ՄՈՒԲ. — Թաղուհու տված խոստումը նույնքա՞ն
արժանավոր ե, վորքան թաղուհին… (գնում ե)։

ՍԵԼՄԱ. — (Մենակ) Թաղուհի՞!!! Յերբե՛ք, վո՛չ մի
ժամանակ, անունն այս հզոր, ;ի հնչել այս-էնո
պատարկ, անիմաստ և վողորմելիք… Միրում եմ,
սիրում ԶԵՐԻՐ արքույին, սխաւանքսերի մեջը թա-
վալվող իմ մեծ ամուսնուն, սիրում եմ նաև իմ
միակ վորդուն, վոր մոլորվել ե անսալով միայն

Հար խորհուրդների... Սիրտս կղնեմ հոր և վոր-
դու մեջ, մարդարներից շշմարիտ խոսքեր կա-
զերսեմ հողով, իսկ սիրող մի մոր և կնոջ սիրտը
անխորտակելի այն կամուրջն ե, վորի շաղախը
կարծրացել և լոկ աստծո շնչով...: Աստված իմ,
հպարտ ստեղծել ես ինձ, վոչ վոք չի տեսել իմ
աչքերի մեջ արցունքի շողը, իսկ այժմ, յեթե հո-
գուս ամպերը վորոտան, պայթեն, Պարսկաստա-
նի մեծ անապատները կարող կլինեն հեղեղով
ծածկել... Մայր... այս կարճ անունը ինչքա՞ն
անհուն ես ստեղծել, աստված...: (Նայում ե
րեմի բոլոր մուտքերը զգուշ) Ենք վոչ մի չըռկ,
վոչ մի վոտնաճայն... արդյոք շղթայված կրե-
րեն վսրդուս... ժառադն իրանյան գահի՝ շըդ-
թայված... ո՛, կամքն աստծո որհնյալ յեղի-
ցի: Թերես արքան իրավունք ունի, իր վորդու
հանդեպ այդպես վարվելու... Թերես ուղում ե
փորձել նրան ե... այդպես և արքան. սիրածից
յերբեմն յերես և դարձնում, յերբ վոր սիրածը
պետության մասին ասում ե նրան այնպիսի խոս-
քեր ովրապիսին վոչ վոք չեր համարձակվեր... Նա
վրդովիում ե, բայց և քիչ հետո վարձատրում
նրան արքայավայել...: (Դեպի Խոզա Մու-
րարեմի կողմը զնալով) Ինչո՞ւ ուշացավ Խոջա
Մուրարեքն... Զլինի՞ խարեց և աղվեսի պես
թողեց հեռացավ... Զե՞, չե՞, չի՞ կարող այդպես
բան լինել... Ամեն, ամեն հույս ողբ կցնդի,
յերբ, յեթե հանկարծ, մեծ շահնշահի դալուստն
հայանեն...

Նեփորների ծայն և լսվում:

Ա՞հ, սատանա, ամեն ինչ կորավ:

Ա. ՄՈՒԲ. — (Սարսափ կեղծելով մտնում ե) Հեռացե՛ք շուտով, ո՞վ իմ թագուհի, արքան ժամանեց: Յես հազիվ եյի բերում իշխանին, յերբ Հեղաձայն չեփորների կանչն հնչեց պալատում: Կերչէնք յերեք՝ յես, դուք, ձեր վորդին, յեթե մեր արքան նույնիսկ կասկածի... Հեռացե՛ք խեկույն և այդ խոստումը տալիք եք դուք ինձ:

ՍԵԼՄԱ. — (Հանկարծ ինքն իրան զապում ե և հոգու վերասլացությամբ) Ուժ տուր, ո՞վ ալլահ, վոր յերբ արքայի հետ յես դրուցեմ, իմ շրթունքները թուլություն չդդան... և կամքն ասոծո որհնյալ յեղիցի...

Հեռանում ե հանդարտ: Լուրջում: Լսվում ե փողերի ձայն: Դունը շարվում են նիզակակիր զիմվորներ, ներքինիներ և այլն: Շահը ներս է մտնում տիրուր, հետևից ավագանին՝ այլայլ ված:

ՇԱՀ ԶԵՅԻԲ. — (Ուղիղ գալիս և անկյունում գտնվող միհրաբի առաջ, ծնրադրում, աղորում) Մեղա՛... մեղա՛... առաջի ասուծո... (Վեր և կենում և խիստ մեղմ ձայնով) Մոլլա Ախունդ Սամազ, թող ժողովուրդը հավաքվի մեջիդներում և աղոթի իմ մեղքերի համար... Վերջերս սկսել է նա վատ աղոթել... Խազնադար Միրզա Մուշտա՛ր, բաժանի՛ր հինդ հարյուր թուման քաղաքի աղքատներին, վորոնք շատացել են ու դադաղել... Թո՛ղ նրանք աղոթեն իմ հոգու վիրկության համար:

Մոլլա Ախունի Սամադը և Միքայ Մուշտա-
րը խոնարհվում են :

ԵԱՀ ԶԵՅԻՐ — (Մելամաղձու, գլուխը կախ, մի
յերկու ժայլ անելուց հետո, հանկարծ գլուխը
բարձրացնում է, աչքերում վայրենի մի բոց,
ասես ուրիշ մարդ լինի : Արագ, մեկ-մեկ կանգ ե
առնում վեզիրմերի առաջ, նայում նրանց աչքե-
րին, արագ նստում է գահին և դիվահար բափով
գոռում) : Դուրս կորե՛ք, դո՛ւրս . . .

Բոլորն շտապում են դուրս :

ԵԱՀ ԶԵՅԻՐ — Յեկ վոչ վոք չհամարձակվի հեռանալ-
ոլալատից :

Բոլորը յերկրապագում են և դուրս գնում :

ԵԱՀ ԶԵՅԻՐ — Տիսո՛ւր եմ, տիսո՛ւր . . .

ԽՈՉԱ. ՄՈՒԻԲ — (վոտների ծայրին կոխելով մոտե-
նում և և խոնարիվում շահի վոտներին) : Աղբյուր-
կենաց, արեգակ արզարության : Քո հավատա-
րիմ շունն ապրում է քո գեմքի ճաճանչափայլ
նշույլով : Այժմ տեսնում եմ, սե-սե ամպեր սլա-
տել են վեհափառիս հոգին : Ահա՛ իմ գլուխը . . .
Հրամայի՛ր, թո՛ղ մարմնիցս անջատեն, քանի վոր
չեմ կարող խոռքով կամ գործով սիրովել նրան :

ԵԱՀ ԶԵՅԻՐ — Վեր կա՛ց, Թոջա Մուրարեք, դու-
միշտ հավատարիմ ես յեղել ինձ : Դու վոչինչ չե-
խաղցրել, ինձանից . . . Նայի՛ր աչքերիս և ասա՛-
մի՞թե չդիտես . . .

Խ. ՄՈՒԻԲ — Գիտեմ :

ՇԱՀ ԶԵՅԻՐ — Ճի՞շտ ե:

Խ. ՄՈՒԲ: — Ճիշտ ե:

ՇԱՀ ԶԵՅԻՐ — Ճի՞շտ ե ուղեմն: Ի՞մ վորդին, ի՞մ
միա'կ վորդին, վորի ծննդյան որը յես հրամա-
յեցի ամրուղի իրանին հրճվել ինձ հետ, վորի դեմ-
քին, ամեն մի շարժվածքին նայելիս, յես ի՞նձ
տեսնել կարծեցի, վորի յերջանկության համար
վոչինչ չխնայեցի, ա'յդ վորդին այժմ ուղում ե...

Խ. ՄՈՒԲ: — Այժմ ուղում ե պալատում ապրող տաս-
նըհինդ ոճերի հետ խավարեցնել արքայիս արեղ-
նափայլ կյանքը: Դավադրությունն արդեն հայտ-
նաբերված ե, արքայից արքա:

ՇԱՀ ԶԵՅԻՐ — Ինչո՞ւ... Ուղում ե աստված վորձել
մարդկանց... Վերջերս մեզ մոտ դործով հյուր
յեկած անգլիացի մեծ թալյողը հայտնեց, վոր
շատ հեռավոր Ֆրանզոստանում դնեն և նորից գը-
լուխ բարձրացրել: Առանց վարտիքի ման եկող
մարդիկ սպանել են իրենց թագավորին և ազո-
թատեղիքը փակել, հրդեհել... Այդպիսի զա-
զիր և ահավոր դործ միայն ավաղակ Մերյե Կու-
լարը կուղենար անել... Իսկ սրա'նք, իմ դեմ դա-
վադրողները, սպալատականներ... իմ միա'կ
վորդին... և ինչո՞ւ համար: Զե՞ վոր յես նրան
ամեն, ամեն ինչ պարզեել եյի:

Խ. ՄՈՒԲ: — Ամեն ինչ, տեր իմ, բացի իշխանությու-
նից: Մեծ ե իշխանու տենչը, մանավանդ յերբ
մարդիկ փոքր են, տեր արքա:

ՇԱՀ ԶԵՅԻՐ — Իշխանու տենչը... Ասա', Ասջա Մու-
րաբեք, այժմ ի՞նչ անեմ:

ԽՈՉԱ ՄՈՒԲ: — Տերս յեթե թույլ տա, սպալատական

ասանհինդ դավագիրներին տեղն ու տեղը կսպանեմ : Իսկ ինչ վերաբերում և արքայազն իշխանին , թող ների տերս , իր հավատարիմ շանը . . . ներքինի յեմ յես , զրկված հայրական դղացումներից և չեմ կարող վեհափառիս սրտի կամկերը քննել : Թող տերս յերկինք նայի և ալլահն ու մարգարները նրան խորհրդատու լինեն :

ՇԱՀ ԶԵՅԻՐ — (Լուրջյունից հետո , չոր) Կանչի'ր արտեղ դահիճին :

Խոջա Մուրարեքը դոմից ծափ և տալիս , մտնում և դահինը , վիրխարի ու դաժան կերպարանիով :

ՇԱՀ ԶԵՅԻՐ — Դանե՛լ արքայազն իշխանին , գլխատե՛լ և գլուխը սկուտեղի վրա դրած բերե՛լ ինձ (Դահինը դուրս : Ներքին մի դող պատում և նըրան) Իսկ այժմ , թմրել եմ ուղում , ուզում եմ չզգալ , վո՞չինչ , վո՞չինչ . . .

Խոջա Մուրարեքը գնում և դեպի կանանցի դուռը , ծափ տալիս , գալիս են ներքինիներ : Ըսկըսվում և նվազածուրյուն : Հարեմուիիները շըրջապառում են շահին : Մեկը պարում և , մի մար պատկում պլաստիկ ցաւցադրական սրովաներով : Նրանց մեջ կան մելամազառ ու հրայրես հահայցներով գեղեցկուիկներ , վարոնիք բնելվում են ազատ հարիզոնի տեսչով : Պարող կնոջը շահը նստեցնում է ծնկներին . լսվում և պարսկական աղեկուր մի յերգ :

Մտնում և քագուիի քագուիյաց Սելմա խարութը : Շահի մյուս կանայք ամոքխած խոնարհեցնում են գլուխները : Շահը դժոնի և նրա գա-

լուց, բանադսորում ե գրիած կնոջ մնալ իր նախ-
կին դիրքով :

ՍԵԼՄԱ ԽԱԹ — (Անսահման մեղմությամբ) ի՞մ ար-
քան, իմ ամուսինը ուրախ և անցկացնում իր
որը և դա մխիթարում ե ինձ: Նա յերե՛ք ամիս և
մոռացել ե ինձ հիշել, բայց քանի վոր նա տխուր
չե, իմ պարտքն և յերջանիկ լինել: Բայց իմ տե-
րը թող ների ինձ, յերբ համարձակվեմ ասել նրա
յերեսին այն, ինչ վո՛չ վոք չեր համարձակվեմ ա-
սել...Տե՛ք արքա, ոսմանյան զորքը անցել ե մեր
պետության աահմանները, փոկ դու նստած պալա-
տում, անց ես կանցնում քո որը պարով ու խըն-
դությամբ, պազշոտությամբ ու խենեշու-
թյամբ: Դու նախնիները քաջությամբ տիրեցին
նահանդների և արի զործերով ընդարձակեցին
տերությունը: Դու պարտավոր ես համանման քա-
ջությամբ զործ և զորություն ցույց տալ, զոր-
պեսզի կարողանաս անսասան մնալ. յեթե վոչ,
կկործանես այս պճնազարդ պետությունն ու դա-
հը և անարդանքի նշավակ կդառնաս բոլոր ազգե-
րի առաջ:

ՇԱՀ ԶԵՅԻԲ — (Կանգնելով) Քաջ խոսեցիր, թո-
գուհի: Վաղուց ե, վոր չեյի յեկել յես քեզ մոռ
կարծեմ, յերեք ամիս ասացիր- և քո ձայնը թարժ
և հնչում ականջիս: Բայց, յերբ յես քեզանից հե-
ռու յեմ յեղել, վորդիս, մեր վորդին, յեղել և
քեզից անբաժան: Անշուշտ, նա քեզնի՛ց և սովո-
րել այլպես վազաժամ ու տենդոս մտածել պե-
տության մասին և մանավանդ ի՞մ մասին:

Փա՛ռք ալլահին, լավ հիշեցիր իմ նախնյաց :
Զգում եմ, զոր չեմ կարող սանձահարել թշնա-
մյաց, ինչպես ինքը ճառեցիր :Յես մի խեղճ մարդ
եմ, իսկ քո վորդին առյուծ կորովի . նրան վա-
յել և թագ, իշխանություն, ամեն շքեղանք : Խո-
ջա Մուրարե՛ք, (ակնարկիլով) կանչի՛ր իմ վոր-
դում, քաջ արքայազնին, ուզում եմ այստեղ, իբ
մորը առաջ «Թաղաղըել» նրան :

Խոջա Մուրարեֆը հասկանալով ակնարկը,
գնում ե :

ԵԱՀ ԶԵՅԻԲ .— (Սելմա խարունի ճեռից բռնելով)
Սիրո՞ւմ ես զու ինձ :

ՄԵԼՄԱ . ԽԱԹ .— (Ծունկի) ՏԵ՛Ր արքա :

ԵԱՀ ԶԵՅԻԲ .— Յերբ քո վորդուն թագը գլխին կտես-
նես, ել չե՛ս սիրի ինձ :

ՄԵԼՄԱ . ԽԱԹ .— (Վոտներին փարարվելով) ՏԵ՛Կ ար-
քա՞ :

Խոջա Մուրարեֆը դահնի հետ ներս և մըտ-
նում : Վերջինս սկսումնի վրա դրած ունի արքա-
յազնի գլուխը :

ԵԱՀ ԶԵՅԻԲ .— (Արտասվախան, կատաղի և լեզուի
հեղմանեցով) ՅԵ՛Կ, իմ վորդի՛, իմ հարազա՛տ,
դո՛ւ, վոր դիտեցար այդպես զեռատի սիրել քո
հորը, ստացիր նրանից իր գլխի թագը (համում
և գլխից բազը և դնում վորդու գլխին*) և դո՛ւ,

*) Բեմական արվեստն ունի միջոցներ այս տեսա-
րանի ահավոր կոպտությունը մեղմելու :

Թաղուհի՝, մի՛ մեա այդպես վոտներիս փարած -
վե՛ր կաց ու խայտա՛քո միակ վորդով. արժե՛,
վոր տեսնես նրան թաղադրված:

Ներկաները զարիւրած են տեսարանից:

ՍԵԼՄԱ ԽԱԹ. — (Ուրախ, վոտի յե յելնում ու հան-
կարծ, տեսմելով վորդու կտրված զլուխը) Վո՛չ.
Վո՛չ, Վո՛չ, Վո՛չ... Վորդեսպա... (ուշաբախ-
վում ե):

ՇԱՀ ԶԵՅԻՐ. — Խոջա Մուրարե՛ք, խեղամահ անել
սրան տասն և հինգ պալատական դավադիրներէ
հետ և մարմինը կորցնե՛լ:

Ներքինիները գրկում են Սելմա խաբունին և
տանում:

ՇԱՀ ԶԵՅԻՐ. — Իսկ հիմա, ուզում եմ, ուղում եմ...
Թո՛ղ պար լինի, Թո՛ղ յերդ լինի... ապրում եմ
յես... իսկ նրանք ուզում եյին ինձ խեղդել, հա՛,
հա՛, հա՛... ապրում եմ յես... Պարեցե՛ք, աղմը-
կեցեք...

Սկսվում ե սարսափախառն խողական մի պար:
Շահը կրքոտ հարակվում և պարողներից մեկի
վրա և քաշելով.

ՇԱՀ ԶԵՅԻՐ. — Իսկ այժմ, նոր վորդի յեմ ուղում,
վորին յե՛ս կմեծացնեմ:

Յերածշտուրյունն ու պարը համկարծ դադա-
րում են: Ճնշող ու տոք լուրյուն:

ՖԻՐՈՒԶԱ ԽԱԹՈՒՆ. — Ալահը մեզ ինչի՞ համար և
ստեղծել...

ԱՌՋԱ. ՄՈՒԻԲ: — Ավատում ալոր ալլահը քեզ ի՞նձ Համար չի ստեղծել... Դե՛, դե՛, դե՛, քաշվեք ձե՛ր բաժինները, կարիք չկա դատողությունների:

Հարիմուհիները գնում են:

ԱՌՋԱ. ՄՈՒԻԲ: — (Մենակ) Գնաց... Սելմա խաթունի դլուխն ել զնաց... Բակ նա անմեղ եր, նա մասն չուներ դավագրության մեջ: Նա զեղեցիկ եր, արեւ բարի... և ստացավ իր վարձը... հի՛, հի՛, հի՛...

Աւանել ե պետք մեզ, անժամանակ և անպատրաստ չխրատել խստափրտ մարդկանց... ճիշտ ե ասված: — «Ո՛վ իմաստուն ե թո՛ղ լոի, վորովհեաւ ժամանակը չար ե»: Մե՛զ Համար ե ասված: — Ժամանակը չար ե: Ժամանակ անընդունելի... ժամանակ կործանման...

Մտնում ե Աերքինի Մուֆադալը:

ՄՈՒՅԱԴ: — Ավաղ ասադաղուշակ Միրզա Սաղրեղշինը ինը խնդրում ե աշխարհի ապաստան շահից, կարեսը դորձով՝ ընդունել իրեն:

ԱՌՋԱ. ՄՈՒԻԲ: — Աշխարհի ապաստան շահն այնպիսի կարեսը դործ ունի այժմ, այնպիսի՝ կարեսը դործ... վորն իմ ու քո կարողությունից վեր ե:

ՄՈՒՅԱԴ: — (Գնում ե և նորից գալիս) Ավաղ աստղադուշակ Միրզա Սաղրեղշինը պնդում ե խընդրում՝ անսնել աշխարհի ապաստանին, շա՛տ կարեսը դորձով:

ԱՌՋԱ. ՄՈՒԻԲ: — Լավ. թո՛ղ քիչ սովածի (Մոտենում ե դեպի շահի յեղած կողմը և բարձր հայտարարում) թո՛ղ արեղնափայլ տերս ների՛ իր հաշ-

տարիմ շանը, վոր համարձակվում ե պահ մի ան-
հանգատացնել նրա արբազան լսողությունը։ Ա-
վագ աստղադուշակ Միրդա Սադրեղդինը, վորին
շնորհված ե ամեն բժպե անհանգատացնել արքա-
յիս, խնդրում ե շատ կարևոր գործով ընդունել
իրեն։

Լոռուքյուն :

ԵԱՀ ԶԵՅԻԲ — (Դուրս ե գալիս դադրած և դառը
դեմքով) Կանչի՛ր այստեղ, չուտ, ավագ մոլ-
լային, իշխան Շահրուշին, իսկ աստղադուշակ
Սադրեղդինին ել ասա՛ թող ներս գա։

(Խոզա Մուրաքեֆը դուրս. Քիչ հետո մտնում
ե աստղագուշակ Սադրեղդինը, խոնարհվելով,
ծունկի) :

Ալլա՛հը յերկարի՛ արքայիս կյանքը,
Ալլա՛հը նրա լույսը պայծառ պահի,
Ալլա՛հը նրա սուրը հատու պահի,
Ալլա՛հը նրա հողին թեթև, սիրտը ուրախ
պահի։

ԵԱՀ ԶԵՅԻԲ — Ի՞նչ ե պատահել, Միրդա...

(Մտնում են Շահրուշ և ավագ մոլլա, խոնարհ-
վում) :

ԵԱՀ ԶԵՅԻԲ — Նստեցե՛ք... (Սադրեղդինին) Խոսի՛ր :

ՍԱԴՐԵԴԻՆ — Աշխարհի ազատառն շահն ապրած
կենա : Արեղակի և աստղերի շարժումից յես նը-
կատեցի, վոր նովրուղից 15 որ անց, Հրատ և
կարիճ աստղերը մոտենալու յեն իրար : Այդ ան-
քախտ աստղերի գործողության պատճառով, ա-
րեւելյան թագավորների, մասնավորապես Պարս-
կաստանի թագավորի դվիսին մեծ փորձանք ե լի-
ք

նելու : Դբա համար ել յես, վորովես բարձրա-
զույն տան համատարիմ ծառա, պարտք համարե-
ցի զեկուցել աշխարհի ապաստանին :

ԵԱՀ ԶԵՅԻԲ — (Դունատովում ե, փոքր լուրջյունից
հետո) . Մի՞թե այդքան շուտ... արյունն իմ վոր-
դու հալածում ե ինձ... ինչպես եյի սիրում նը-
րան, ա՞իս... ինչպիսի՞ արքա կը լիներ... ա-
վա՞գ... Նա յեր իմ միակ հույսը լուսատու...
Ո՞ւ, յեթե ամեն մի իշխանավոր, մարդկանց աշ-
քերին ուղիղ նայելով, կարենար նրանց միտքը
և սիրաը կարդալ անսխալ, ասարձո նման...
Աստված իմ, մեղա՞... (Հանկարծ կատաղի նա-
յելու ավագ մոլլային) . ինչո՞ւ...

ԱՎԱԴ ՄՈՒԼՈՒ — (Վորը զննում եր Սադրեդդիմին) .

Արքայից արքա... ասաղերի զիտությունը սուրբ
ե և աստվածային, բայց... (Լուսմ ե) :

ԵԱՀ ԶԵՅԻԲ — Ի՞նչ բայց... ինչո՞ւ լոեցիր :

ԵԱՀՐՈՒՀ — Բայց զգույշ պետք ե լինել աստղագու-
շակի դաշտաճանությունից :

ԵԱՀ ԶԵՅԻԲ — (Լուրջյունից հետո) Խոջա Մուրա-
բեք, կանչի՛ր դահիճին :

(Խոջա Մուրաբեքը դուրս : Քիչ հետո մտնում
ե դահիճը) :

ԵԱՀ ԶԵՅԻԲ — Աստղագուշակ Միքա Սադրեդ-
դի՛ն, յես քեզ տվել եմ մեծագույն կոչումը ավա-
դության, դու իմ պալատում ազատ յել ու մուտ
ունես կարծում եմ... Դու պարտավոր ես ա'յս
իսկ բոպեյիս հայտնել, թե ի՞նչպես, ի՞նչ միջաց-
ներով աստղերի գուշակած փորձանքի դեմք պետք
ե մենք առնենք :

ՄԱԴՐԵԴ — (Ըմբռնելով դահինի ներկայուքյունը) Արեգակ արդարության, աղբյուր շնորհաց... Դժբախտության առաջը կարելի յեւ առնել: Միայն մի ժամ ինձ ժամանակ տրվի — յևս կերթամ և Ռւլուզ բեկի կաղմած աստղագիտական աղյուսակը կնայեմ, կխորհրդակցեմ աստղագիտության մեջ ինձնից ավելի փորձված Մելլանա Զալալեղդինի հետ...

ՄՈՒԺԱԴ — (Հայտարարելով) Աստղագետ Մելլանա Զալալեղդինը խնդրում եւ աշխարհի ապաստանից ընդունել իրեն:

ՇԱՀ ԶԵՅԻՐ — Ներս կանչի՞ր, իսկո՞ւյն:

ՄԵՎԼԱՆԱ — (Մտնում եւ և խոնարհվում) Աշխարհի ապաստանն առյօնած կենա: Նկատի ունենալով այն, վոր Նովրուզից տասնհինգ որ հետո Հրատ և կարիճ ասազերի մոտենալով, աշխարհի ապաստանին մեծ դժբախտություն կարող եւ պատահել, պարտք համարեցի, Շահիս տված իմ այցելությամբ, բախտավորեցնել ինձ և նախորդք վրանդի նկատմամբ մի քանի միջոցներ առաջարկել: Գուցե, տե՛ր մի արասցե, ջահել աստղագուշակներին այդ միջոցներն անհայտ լինեն:

ՇԱՀ ԶԵՅԻՐ — (Ուրախ) Մելլանա', մենք հենց այլ մասին եյինք խորհրդակցում: Աստղերի մասին մեզ ամեն ինչ պարզ ու հայտնի յեւ: Դու միայն ասա՛, թե այդ փորձանքից ազատվելու ի՞նչ միջոցներ են հարկավոր:

ՄԵՎԼԱՆԱ — Միջոցը ծանր է, արքայից արքա:

ՇԱՀ ԶԵՅԻՐ — Ասա՛:

ՄԵՎԼԱՆԱ — Միջոցն եւ դժվար, արքայից արքա:

ՇԱՀ ԶԵՅԻՐ .— Ասում եմ, ասա՞ :

ՄԵՎԼԱՆԱ. — Միջոցն և դաժան ու փորձությամբ լի, արքայից արքա :

ՇԱՀ ԶԵՅԻՐ .— Հրամայում եմ . . . Շարժումն աստեղաց կամքն և աստուծու . . . ինչքա՞ն ել ծանր ու դժվար լինի, ինչքա՞ն ել դաժան ու փորձությամբ լի, լսելու յեմ քեզ :

ՄԵՎԼԱՆԱ. — Առիթ առավոտո՛ւ : Թո՛ղ աշխարհի ապաստան անըս, այս դժբախտ որերին, յերբ գեռ նոյքուղից տասնհինդ որ չի անցել, հրաժարվի իշխանությունից և . . .

ԲՈՒՌՈՒԲ. — Ի՞նչ, ինչպե՞ս . . .

ՇԱՀ ԶԵՅԻՐ .— Լու՛ք բոլորդ : (Մեվլանային) Շարունակիր և . . .

ՄԵՎԼԱՆԱ. — Յեզ դահն ու թագը հանձնի այնպիսի մեկին, վորը ռամիկի աչքում արժեք ունի, բայց հանցաղործ և մահվան արժանի : Այդպիսով տառղերի առաջ բերած չարիքը հանցաղործին կվիճակվի : Յերբ հանցաղործը խորտակվի, այն ժամանակ, աշխարհի ապաստանը դուրս կդա իր թաղսակ տեղից, թաղին ու դահին տեր կդառնա, վողջ ու յերջանիկ կթաղավորի : Բայց ժողովը դից պետք և վոչ վոք չիմանա այս միջոցի մասին :

ՇԱՀ ԶԵՅԻՐ .— (Լուրյումից հետո սկսում է զննել բոլորին և հետզիեւն ծիծաղել) . Հա՛, Հա՛, Հա՛ . . . լսով և արդ, վատ չե : Հա՛, Հա՛, Հա՛ . . .

ՇԱՀՅՈՒՆՀ. — Արքայից արքա, աղաջում եմ ձեզ զգասա լինել և հայտ շընծայել այս զառամյալի զաղիր խոսքերին :

ՄԵՎԼԱՆԱՆ.— Արքայից արքա, քո պալատումը հավատարությամբ ե փայլել միշտ իմ ծառայությունը և մինչև որս չեմ արժանացել այսպիսի ծանր վիրավորանքի:

ՇԱՀՐՈՒԴ.— Ավագ, ծերունի աստղագետներ, դուք սկսել եք աստղերին դիտել վոչ թե յերկնքում, այլ յերկը վրա... Մի՛ հավատաք, տեր...

ՄԵՎԼԱՆԱՆ.— (Մոլեռանդ) Շարժումն աստեղաց կամքըն ե աստծո... Շատ եմ ապրել յես, արքայից արքա, զվաճատեցեք ինձ, բայց ականջ դրեք ծերունուս խոսքին, խոսքին աստծո... Շահրուհ իշխանի աչքերի խորդում անարդ Յեղիզն և, վոր բույն և դրել, արյուն պահանջում: Նա թափել տոլեց քո միակ վորդու արյունն այսոր, թափել կտա և քո' արյունը, ամենահզո'ր: (Ընկնում և Զեյլիրի վաստերին):

ՇԱՀՐՈՒԴ.— Զրպարտում են, տեր, քո հավատարիմ միակ ծառային: Վորդուդ արյունը...

ՇԱՀ ԶԵՅԻՐ.— Լոկ'ր, հերի՛ք ե... Վորդուդ արյունուց, ալորդուդ արյունուց... Գնա՛, հեռացե՛ր (Բնմելով Մեվլանայի քնից). Վե՛ր կաց, Մեվլանա... Շարժումն աստեղաց կամքն ե աստծո...

ՇԱՀՐՈՒԴ.— Թող այդպես լինի... Յես հեռանում եմ, բայց կդա մի որ, վոր ինձ կինոտես և քո ատելին այն ժամ կդառնա քո բարեկամը, միակ սիրելին (գնում ե):

ՇԱՀ ԶԵՅԻՐ.— Այժմ ասացեք, արդյո՞ք նկատի ունեք մեզ և որենքին դեմ գնացող այնպիսի՛ մի հանցագործի, վորը լինի մահվան արժանի:

Այդ միջոցին Մեվլանան և Սադրեդդիմը նա-
յում են իրար:

ՄԵՎԼԱՆԱ. — Դոյարան մտա՛ց, Շիրաղում այնպիսի
մի անգղամ և հայտնիել, վորոշիսին ամբողջ աշ-
խարհում հաղիով թե ճարվի:

ՇԱՀ ԶԵՅԻՐ. — Ավաղակ Մերյե կուլարի մասի՞ն և
խոսքը:

ՄԵՎԼԱՆԱ. — Վոչ, դրանից վաստ: Նա սովորել է
հեռու յերկրերում: Մի անաստված և, վոր քա-
րոզում է, թե Մուհամեդի, Հաղթեթը Ալու, Հա-
սան-Հյուսյինի ծառաներն այժմ գողեր են բոլոր,
վորոնք միացած թագավորի հետ, խարում, ճըն-
շում են իր ժողովրդին:

ՇԱՀ ԶԵՅԻՐ. — Ո՞վ և այդ զաղեր, բազմաբիծ տեն-
դը և ինչո՞ւ նրան չեն ձերբակալում:

ՄԵՎԼԱՆԱ. — Ամենահարուստ վաճառականներ և
ստոր սահիկն, մինի նա դեղջուկ, թե արհետա-
վոր, լսում են նրան, հարգում, պաշտպանում:

ՇԱՀ ԶԵՅԻՐ. — Խնչպե՞ս և կոչվում:

ՄԵՎԼԱՆԱ. — Նրան կոչում են Միրզա Յուսուֆ,
աեր:

ԲՈԼՈՐԸ. — Միրզա Յուսուֆը:

Ա. ՄՈԼԱՆ. — Արեգակ անաշառափյուռ, նա դեմ և
խոսում մեր բարձր կառավարության: Յեվ լսել
եմ, վոր ավաղակ Մզրախ Մերյե կուլար Շիր-
դաղը, վոր Շիրաղում անգղամ թալաններ և ա-
նում, զաղանի կապ ունի այդ Յուսուֆի հետ:

ՄԵՎԼԱՆԱ. — Աշխարհի ապաստան Շահն իր գահն ու
թագը պիտի հանձնի այդ սրբկային, վորպեսզի
աստղերի կործանարար գործողության չնորհիվ
իր արժանի պատիմն ստանա:

ՇԱՀ ԶԵՅԻՐ. — (Լոռվյումից հետո) Մենակ թողեք
ինձ:

ԲՈԼՈՐԸ. — Ալահը թող յերկնային փորձանքներից
ազատ պահե աշխարհի ապաստանին:

Թոլոքը դուրս են գնում:

ՇԱՀ ԶԵՅԻՐ. — (Մենակ) Քաղցր ե կյանքը, բայց
քաղցր ե նաև իշխանությունը: Շատ-շատերն ինձ
հիմար են կարծում, բայց ալահը մեծ, ինձ խելք
ե տալիւ: Յես ավելի պարզ տեսնում եմ շատ բան,
քան ուսում առած իմ վեղիքները: Իմ կառավա-
րած յերկիրն այժմ խառնաշխոթ ե... Վաճառա-
կաններն արևմուտք տեսած, այնտեղից, հաճախ
ապրանքների հետ—հենց ապրանքն իր հետ—
զաղտնի բերեցին դիմային մտքեր և իրավունքի
զաղիր պահանջներ... Սառոր ուամիկը, լինի նա
դեղջուկ թե՛ արհեստավոր, նրանց նայե-
լով, ինքն ել իր հերթին լեզու յե ա-
ռել, և յես, Զեյիրս, չեմ կարողանում կըտ-
րել այդ լեզուն... Իմ դեմ արատամբ մի ա-
պազակ, Մերյե Կուլարին, չեն կարողանում
գետես բանել... Մի թանաք լիդող, Յուսուֆ կոչ-
ված մարդ, կարողանում ե անվախ հայհոյել...
Մեփական վորդիս մոր հետ միացած՝ իմ դեմ
դավում ե... Միաք կա սրանց մեջ և ահավո՞ր

Ժիտք... Ահա՝ թե ինչո՞ւ սահմանադլիսից տասն-
նըշինդ որվա տարածությունը քար ու քանդ ա-
րի, վոր սամանցոց հետ կուիվ չունենամ։ Զորքը
ինձ պետք եր մայրաքաղաքում... Բայց զորքի
մեջ ել խլրտումներ կան։ Դժողոհությունը ձև և
սուանում... Զուր չե, վոր Հրատ և Կարիճ ասո-
գերը մոտենալու յեն։ Աստղերի դիտությունը
սուրբ և և աստվածային... Իրանի արքան վտան-
գի տակ և։ Ի՞նչ կարող և պատահել... Արդյոք
չեսանա՞մ զահից ու թագից... Գոնե վորոշ ժա-
մանակ յես մարդ կղառնամ, պարզ, հասարակ
մարդ... Իշխանավորը յերբեք, ո՞ւ, յերբեք չի
տեսնում մարդկանց անկեղծ ծիծաղը կամ թե
դայրույթը։ Իմ առաջ բոլորը կեղծել են, քծնել,
սոզացել, խարել... (Կամչելով) Խոջա Մուրա-
բեք...

ԽՈՉԱ. ՄՈՒԲԻՇ. — Տե՛ր իմ։

ՇԱՀՀ ԶԵՅԻՐ. — Յենթագրի՛ր, վոր յես այլես թագա-
վոր չեմ և մի անգամ անկեղծ խոսիր ինձ հետ։
Յես այդ ուզում եմ վորձել։

ԽՈՉԱ. ՄՈՒԲԻՇ. — Յես տիրոջու հետ մի՛շտ ել անկեղծ
եմ խոսել։

ՇԱՀՀ ԶԵՅԻՐ. — Թող այդպես լինի։ Մի անգամ սո՛ւտ
խոսիր։

ԽՈՉԱ. ՄՈՒԲԻՇ. — Չեմ կարող սուտ խոսել արքայից
արքային։

ՇԱՀՀ ԶԵՅԻՐ. — Ամենամեծ սուտը, վոր դու խոսե-
ցիր և խոսել ես միշտ... Հրամայում եմ. ասա՛,
ասա՛, վոր յես հիմար եմ, վայրինի յեմ, գաղան
եմ, ասա՛...»

- ԿՈՉԱ. ՄՈՒԲ** — իմ տերը հոգնած եւ և տեսնդ ունելու կազմի կլիներ նա հանդստանար :
- ՃԱՀ ԶԵՅԻՐ** — (Հարձակվելով քանում եւ նրա կողորդից) Ասա՛, վոր հիմար եմ, վոճրագործ եմ, դաղան եմ, ասա՛...
- ԿՈՉԱ. ՄՈՒԲ** — (Արձագանքի պես) Հիմար եմ, վոճրագործ եմ, դաղան եմ...
- ՃԱՀ ԶԵՅԻՐ** — (Զգլանեալ իրում եւ նրան) Ը՞ս, խեղկատա՛կ... (Գնում ե) :
- ԿՈՉԱ. ՄՈՒԲ** — Փա՛ռք ալլահին, այս անդամ ել փրկվեցինք: (Դեպի շահի գլանցած կողմը) Շա՞տ ելիք ուզում, վոր ճիշտն ասեմ. լազ. կասեմ... վայրենի՛ ես, դաղա՞ն ես, վոճրագործ ես և մտնավանդ հիմար ես... իսկ յես մի հասարակ ներքինի յեմ, ինձնից խլել են ամեն ինչ, բացի խելքից... Յել քանի վոր խելք ունեմ, պետք է մտածեմ... Շա՞տ բան տեսա այսոր, չա՞տ բան լսեցի... Ոքերը փոխվում են, մարդիկն ել հետք պետք ե վոր փոխվեն... Ժամանակը չար ե, ժամանակ կործանման, ժամանակ անընդունելի հի՛-հի՛-հի՛...

ՎԱՐԱԴՐՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐԱԲՎԱՆ

Ա. ՊԱՏԿԵՐ

Բեմը ներկայացնում է արքութիւն ախոռապետի նոր կառուցվող ապարանքի բակը :

Նառած են, դաժան տեսլով, յերկու հսկիչներ շիրուխ են քաշում։ Լսվում է վորմնադիրների աշխատանքային յերգը^{*)}։

Ա. ՀԱԿԻՉ — (Դոռալով) — Ինչո՞ւ յես դու դատարկ կանգնել, մենակ յերդ ասել դիտես, քեզ յերգելու չենք բերել այստեղ։

ՎՈՐՄՆԱԴԻՐ — (Ներսից յերգելով) Տեսնում ես Քյարփիչին եմ սպասում, այ աղա՛ (յերգը ուժեղացնելով)։

Քյարփիչը բե՛ր, այ բալամ,
Նանդ ասլըի՛, հայ բալամ,
Կոււդ ամո՛ւր, այ բալամ,
Քյարփիչը բե՛ր, հայ բալամ։

^{*)} Պարսկաստանում պատ շարողները, աշխատաւում են յերգելով։ Նրանք հաճախ «իմարտովիղացիա» յեն անում, բառերը հարմարեցնելով իրենց աշխատանքի պահանջներին։ Այդ սովորությունը մընացել է մինչև այժմ։

Բ. ՀԱԿԻՉ — (Գոռակով մյուս կողմը) Շո՛ւտ քյաբ-
փիչը հասցրե՛ք, փեղեր սուխտաներ : ԶԵ՞Ք լը-
սում, պատ շարողի կոկորդը մաշվեց ձեզ կան-
չելով :

ՄԻ ԲԱՆՎ — (Դրսից յերգելով) .

Քյարփիչը բերում եմ, այ վարպե՛տ,

Բեռա ծանր ե , հայ վարպե՛տ,

Որս սեցավ , այ վարպե՛տ ,

Քյարփիչը բերում եմ, հայ վարպե՛տ :

Ա. ՀԱԿԻՉ — (Յերևացող բանվորին մտրակով խփե-
լով) Հառամ զադա՛, յես քո որը այնպես սեց-
նեմ , վոր ... Վոսկորներդ կջարդեմ , փեղե՛ր-
սակ :

Բ. ՀԱԿԻՉ — (Նույնպես խփելով) Դե՛ , դե՛ , դե՛ ,
շո՛ւտ , շան ծիծ ծծածներ :

Ա. ՀԱԿԻՉ — (Նստելով) Մարդո բեղադում ե նույն
շանվորդկերանցը աշխատեցնելով ել , ծեծելով
ել ... Մի նորերին չբերին վոր ...

Բ. ՀԱԿԻՉ — (Նույնպես նստելով) Կը բերեն , շու-
տով կը բերեն ... Նրանց մեջ հայեր ու վրացի-
ներ ել կան , վորոնց մեր շահը իրենց յերկրնե-
րից զոռով տեղահան անել տվից ... Մեր ար-
քունի ախոռապետը խնդրել ե նահանգապետից ,
վոր քաղաքի չքավորներից ջոկեն ու դռո⁶⁾) ու-
ղարկեն իր աղարանքի շինության համար :

Ա. ՀԱԿԻՉ — Վրացին լավ ե . Նրանց մեջ սիրուն
տղաներ շատ կըլինեն :

*) Տաժանակիր աշխատանք , վորին յենթարկվում
ելին չքավոր տարբեքը խաների կոմ վանքերի շինու-
թյան ժամանակ , ձրի աշխատելով :

Բ. ՀԱՅԻՒԶ — Վրացին լավ է, բայց վերջը, անպատճառ, դժխիոդ մի փորձանք կը հանե... Այ', ես աչքս, վոր կա, մի վրացու արածն է... փեղեր սուխտանե՛ր... Եա՛ց մի նորերին բերեն, մի աչքիս տեղ քանի աչք եմ հանելու:

Ա. ՀԱՅԻՒԶ — Հայն ել մի բարի պատուղ չե:

Բ. ՀԱՅԻՒԶ — Զլինի⁵ քո ել մի տեղը... հահահահա...

Ա. ՀԱՅԻՒԶ — Քյոռ, ինչո՞ւ յես ծիծաղում:

Բ. ՀԱՅԻՒԶ — Հեք, այնպես... Վո՞րոեղդ...

Ա. ՀԱՅԻՒԶ — Մի՛ հարցնի...

Ներս և մտնում Միքզա Յուսուֆը:

Ա. ՀԱՅԻՒԶ — (Յերկրորդին) Միքզա Յուսուֆն և դալիս... Որդ բարի՛, Միքզա Յուսուֆ:

Բ. ՀԱՅԻՒԶ — Բարի յես յեկել, Միքզա Յուսուֆ: Ի՞նչ դործով և յեկել Միքզան մեղ մոտ:

Ա. ՀԱՅԻՒԶ — Տերս կանչել եր ստացած կարեռ մի նամակը կարդալ տալու: Շնորհ բերեք ներս, Միքզա Յուսուֆ:

Լովում և պատ շարողի յերգը: Յուսուֆը
կանգ և տանում:

ՊԱՏ. ՇԱՅ — (Ներսից յերգելով).

Քանի աշխարհում սերն և անմահ,

Շարիր տերերի պատերը, բեննա⁶) ,

Ավերակ հոգում, կարիճ կը դա ման,

Չսիրող սիրութ ինչի՞ յե նման:

*) Վորմնադիր :

ՅՈՒՍՈՒՏ — «Ավերակ հոգում, կարիճ կը զա ման, չսիրող սիրող ինչի՞ յե նման»... Վայրի գաղաներն անդամ այդ յերգից կլցվեն սիրով... Լսե՛ք, այդ սրտի տիրուր մեղեդին: (Ներս ե գնում):

Հեռվից լսվում ե, թե իմշպես մտրակների հարվածով բերում են պարսիկ, վրացի և հայ չժավորմերին:

Բ. ՀՄԿԻՉ — Բերում են, բերին:

ՑԱՅՆ ԴՐՍԻՑ — Կանգնեցե՛ք, փեղեր սուխտանե՛ր... Յեկե՛ք այս կողմը: (Մտմում ե չժավոր մարդկանց խումբը):

Գ. ՀՄԿԻՉ — (Համձմելով նորեկներին) Նահանգապետ խանը, արանց փեշքել ուղարկեց ձեր տիրովը, արքունի ախոռապետ Հուսեյին խանին: Ասաց — Բող իր նոր շենքի համար գործածի:

Ա. ՀՄԿԻՉ — Խանի շվաքը մեր գլխից անպակաս լինի: Համեցեք, աղա Խուրծիդ, հոգնած կլինեք, չայ ու զայլան համեցեք, ճաշն ել պատրաստինի:

Բ. ՀՄԿԻՉ — (Նորեկներից մի ժամկիսին ապահելով) Դեհ, ես կողմը յեկե՛ք, ցեխ շաղախեցե՛ք, քյարփիչ վերցրե՛ք, շուտ գործի անցե՛ք, փեղեր սուխտանե՛ր, հանդստանալու տեղ չե ետեղ: (Վոտմերի հարվածով նրանց գործի յե դնում: Յերրորդ հոկիչին դառնալով, շողոքոր) Համեցեք, աղա Խուրծիդ, մեր սեղանը չնորս բերեք:

Ներս են գնում: Լսվում ե նորից պատ շա-
րողների յերգը:

ՄԻ. ՊԱՏ ՇԱԲ.—Ո՞վ, մեջքս կոտրվեց, թութուն ու-
նե՞ս, կացու:

Բ. ՊԱՏ. ՇԱԲ.—Ունեմ, ախալեր, ա՛ռ:

Դ. ՊԱՏ ՇԱԲ.—Այ զարդաշներ, ինձ մոտ հաց կա,
կերեք, ուղո՞ւմ եք:

Ա. և Բ. ՇԱԲ.—Տո՞ւր, ամբողջ որը չենք կերել:

ՄԵՒԲ.—(Շշուկով) Լսե՞ք, ՄԵՐՅԵ Կուլաբը յեկել ե
Շիրազ:

ՄԻ. ՈՒՐԻՇԲ.—Ի՞նչ ՄԵՐՅԵ Կուլաբ:

ՄԵՒԲ.—Նե՞ս, վոր մեղ նման պատ շարող եր, զաշաղ
դառավ ու զենքը ձեռքին սարերը քաշվեց... իր
մարդկանցով, հիմի յեկել ե այստեղ, Շիրազ:

ԱՅԼԲ.—Վորաեղի՞ց դիտես:

ՄԵՒԲ.—Գիտեմ:

Ա. ՇԱԲՈՂ.—Մեղ մոտ չի՞ դալու:

ԱՅԼԲ.—Կամոց, ուրիշ բան խոսեք, դժովե՞լ եք,
ի՞նչ ե:

Ներսում ուժեղ աղմուկ:

ՀՄԿԻՉԻ ԶԱՅՆԲ.—(Ներսից) Փեղեր սուխաանե՞ր,
չե՞ք տեսնում, վոր հյուր ունենք, ի՞նչ եք աղ-
մուսմ:

Լսվում ե մտրակի ուժեղ հարվածների ճայն
ու հեծեծանք:

ՅՈՒՍՈՒՔ.—(Մտնում ե և ինքնիրեն խոսում) Տիրոջ
բերանից մի քաղցր խոսքը նրանց ավելի կիրա-
խուսեր, քան թե մտրակի շառաչյունները:

Հավում ե ուժեղ նիշ, հետո լոռւքյում: Հա-
վաքվում են բանվորներ և սարսափով նայում
դեպի այդ կողմը:

ԱՄԱԶԻՆ. — Պատ չարողը վայր ընկապէ:

ՅՈՒՍՈՒԹ — Յերդը բերանին, չդիմացավ հարվածին
ու ընկապէ:

ՅԵՐԿՐՈՐԴ. — Խեղճի յերեխեքը վորբացան:

Բոլորը մնում են հառաջակուլ:

ՎԱՐԱԴՈՒՅՐ

Բ. ՊԱՏԿԵՐ

Շահի պալատը: Վարագույրը բացվելիս, լուռ և
անշարժ, կամագնած են իշխաններ, ազնվականներ,
բարձրաստինան պաշտոնյաններ, հոգևորականներ
և այլն: Շահ Ջեյիրը դուրս ե գալիս քագը գըլ-
խին, ադամանդազարդ գայիստնը ձեռքին, մեջքին
քուր և գոտի: Բոլորը խոնարհվում են:

ՇԱՀ ՋԵՅԻՐ. — (Բարձրանում ե գահին) Այն որից,
յերբ ամենաբարձրյալն առառւծո բարեհաճու-
թյամբ, զահ բարձրացա, թաղավորում եմ ձեզ
վրա: Այժմ, թելաղբությամբն ալլահի ու մար-
դարեյի, յես ցանկացել եմ հրաժարվել թաղից ու
դաշից: Գնացեք և հանդիսավոր շուքով զահ
բարձրացրեք այն մարդուն, վորն իմ հրամանով
ինձ պիտի հաջորդի: (Հանում ե քագը և դնում
գահի վրա, հանում զգեստները, քուրն ու գոտին

և մնում սկ պարզ զգեստով) Այժմ աղքատ Զե-
յիրն եմ յես, Մեհմեղի վորդին։ Ինձ մէ վինտուեք,
միենույն և, չեք դտնի։ Դնացե՛ք և թո՛ղ ալլա՛հը
որհնի ձեզ։

Ավագանին, զգեստներն ու քագը առած,
զնում եւ։

ԶԵՅԻՐ — Խոջա Մուրաբե՛ք, խոկ իմ հարեմի կանանց
տակն ես։

ԽՈՉԱ. ՄՈՒԲԻՇԱՄԵՐԻ — Այս՝, տակն եմ։

ՇԱՀ ԶԵՅԻՐ — Կանչի՛ր նրանց, շո՛ւտ։ Անհրաժեշտ
ե նրանց ապահարզան տակ։

Խոջա Մուրաբեկը զնում եւ։

ԶԵՅԻՐ — (Մննակ) Ինչո՞ւ զինակվեց այսպիսէ
չփոթ ժամանակներում ինձ թագավորել... Ապրել
եմ ուղում... Կարիքների մեջ թաղված վողբալի
ոտմիկն անդամ ձգուում և ապրել և նա աղրում
և ինձանից հանդիսա... Յես եմ միշտ քնից վա-
խով վեր թռել... Թնդուշ վայելքի ցնծության
սպահին, կասկածն իժերի մի կծիկ դառած, ժան-
առաժանա թույնով սիրտու լցըել եւ։ Այս և ահա
այն իշխանությունը, վորի արտաքին փայլից շլա-
ցած, հարազաններն անդամ, շատ հաճախ, մի-
մյանց ընդդեւ դահիճն են դառնում... Ինչ լավ է
թողնել, թողնել ամեն ինչ, փա՛ռք, իշխանու-
թյո՛ւն, չքեղանք պատիր և աստվածորոն դարվի-
շի նման քյաշքյուլ ի ձեռին, աղքատ, մուրացիկ,
թափառել, ընկնել աշխարհից աշխարհ։ (Մնում
և մռայլ ու ներտմիտի)։

Խոզա Մուրարեքի հետ ներս են մտնում հա-
րեմի քաղում կանայք։

ԶԵՅԻՐ — (Կանանց) Հայտնի յե ձեզ ել, վոր
յես այլևս իրանյան գահի թաղավորը չեմ։ Իմ
ալագանին գնացել ե նոր թաղավորին, վարուավոր
շքով, բերելու այստեղ։ Յես պարզ հայտնում
եմ, վոր ձեզ սղահելու, զարդեր, հաղուստներ
տալու միջոցներ չունեմ։ Անհրաժեշտ ե ձեզ ա-
պահարզան տալ։ Խոզա Մուրարեք, պատռի՛ր ա-
մուսնության արձանազրությունները։

(Խոզա Մուրարեքը պատռում է)։

ԶԵՅԻՐ — (Կանանց) — Իսկ այսմ ո՞վ և ձեղանից
այն, վոր թշվառությունից չվախենալով, կուղե-
նա ինձ, Մեհմեղի վորդի Զեյիրի հետ գալ։

ՖԻՐՈՒԶԱԼ ԽԱԹՈՒԻՆ — Այն, ինչ մեզ ասին և ասիր,
տե՛ր իմ, այնքան անախորժ, անակնկալ եր, վոր
մենք չդիտենք, յերազումն ենք, թե՞...։ Մեր
տերն հրամայեց բաժանմվել իրանից և մենք հնա-
զանդ, յենթարկվեցինք իր հղոր կամքին։ (Լոռում
է)։

ԶԵՅԻՐ — Հետո ի՞նչ, խոսի՛ր, իմ ժամը կարճ
ե, ինչո՞ւ լուեցիր։

ՖԻՐՈՒԶԱԼ ԽԱԹՈՒ — Տեր իմ, ներսում մենք յերկար
խորհեցինք և այն, վոր ասել վիճակվել ե ինձ,
ցանկությունն ե. մեր այս բոլորի։ Ամուսնացել
եյինք թաղավորի հետ և շատ գոհ եյինք մենք
մեղ վիճակված բախտով ու դիրքով... Իսկ
այժմ, յերբ վոր այդ բարձր բախտից դրկվել ենք
մենք, նորից Մեհմեղի վորդի Զեյիրի հետն ա-
մուսնանալ չենք կարող, տե՛ր իմ։

ԶԵՅԻՐ — Այդպէս... այդպէս.... Այդ և ուրեմն
բոլորիդ կամքը :

Կանայք գլուխները կախ են անում :

Խոջա Մուրարե՛ք...

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՌԵՐԵՐ — Այստեղ եմ :

ԶԵՅԻՐ — Կահչի՛ր դահճին շուտ :

Հարեմուհիների մեջ սարսափ :

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՌԵՐԵՐ — (Անվրդով) Ի՞նչ բանի համար :

ԶԵՅԻՐ — Շո՛ւն, Հրամայում եմ կանչել դահճին :

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՌԵՐԵՐ — Իսկ շունչն հարցնում ե՝ ի՞նչ
բանի համար :

ԶԵՅԻՐ — Գլխատե՛լ իսկույն այս անզդամ կանանց :

Սարսափը անում և կանանց մեջ

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՌԵՐԵՐ — Ուշ եւ :

ԶԵՅԻՐ — Ի՞նչողեա ևս համարձակվում առարկել դու
ինձ :

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՌԵՐԵՐ — Մեհմեղի վորդի Զեյիրին միշտ
եւ կարելի յեւ առաքկել և կարիք չկա այդքա՛ն
դուալու :

ԶԵՅԻՐ — Կորի՛ր, հեռացի՛ր :

ԽՈՉԱ. ՄՈՒԲԱՌԵՐԵՐ — Զեմ կարող հեռանալ. յես
սպասում եմ նորընտիր շահին :

ԶԵՅԻՐ — Բ՛հ, դո՛ւ, վոտի հո՛ղ, նստի՛ր իմ գըշ-
խին... (Լանանց) Նորից մի անզամ և վերջին
անզամ զիմում եմ յես ձեզ. զուք, վոր իմ փառքն
ու հղորությունը վայելել եք միշտ, մի՛թե չկա

մեկը, վոր այս որերի իմ թշվառությունն ինչ
հետ բաժանի:

Փոքր լուրջուն:

ԽՈՒԼ ՄԻ ԶԱՅՆ — Կա'...

Բոլորը դառնում են դեպի ձայնը:

ԲՈԼՈՐԸ — Նազլուն...

ՆԱԶԼՈՒ ԽԱԹՈՒՆ — (Առաջ գալով) Այո', յե՛ս:

ԶԵՅԻՐ — Նազլու խաթուն, դո՞ւ... դո՞ւ, վոր բռու-
նությամբ պալատ ես բերվել, վոր ինձ կամովին
յերբեք չես տրվել...

ՆԱԶԼՈՒ — Այո', յե՛ս... վորին դու բռնի հայրենի
յերկրից, հայրենի տնից քաշ տվիր այստեղ, այս
քո հարեմը: Բռնացար վրաս, անվերջ բռնացար և
հաճախ, վորպեսզի ինձ անարդեա, իմ ներկայու-
թյամբ աղախիններիս հետը լրբացար: Այդ քո
մեծ փառքի որերն եյին, ո՛, արքա եյիր դո՞ւ-
արքանների, շահնշահ համայն իրանի և այս
կանայք, վորոնք քեզ այժմ լքում են, միմյանց
մսերը կրծոտում եյին, վոր արժանանան քո մեկ
դպվանքին... իսկ այժմ, լսի՛ր... Մեհմեդի վորդի
Զեյի՛ր, ամենքից լքված և մենակ, ինչպես տա-
րիներ ինքս եմ յեղել, յի՛ս կարող եմ քեզ միայն
հասկանալ... Վոչինչ, թող բոլոր կանայք քեզ
լքեն, յե՛ս դավիա եմ քո թշվառությունը քեզ հետ
բաժնելու:

ԶԵՅԻՐ — (Ընորհակալ եմ... պետք չե-
տա... պետք չե... յես մենակ կերթամ:

ՆԱԶԼՈՒ — Դու յերբե՛ք, յերբե՛ք, մենակ չե՛ս դնա...
Այժմ քեզ համար յես անհրաժեշտ եմ:

ԶԵՐԻԲ — Վո՞չ, կարեք չկա... Իմ ամբողջ կյանքում վողորմություն միշտ ինքս եմ տվել, այժմ դժվար և ինձ վողորմություն ուրիշից ստանալ... Ես մենակ կերպամ.


ՆԱԶԼՈՒ — Դու յերեք, յերեք մենակ չես գնա: Դու աղասիվում ես թաղավորական այս նենդ պայմանից, կեղծիքից, դասից... Դու առաջ յերեք շտացար սիրո այն մեծ հաճույքը, վորով իմ հողին միշտ լիքն և յեղել... Իսկ այժմ դալիս, գալիս եմ քեզ հետ... Գնանք միասին... Տարիներ ամբողջ, իմ բոնադատված մենակության մեջ, յես յերադել եմ յեղնիկի նման աղատ թռչկոտել... աղատության վառ աննչանքը սըրտում, յես ցանկացել եմ իմ հայրենական լեռներում լինել և զիշերները լսել աստղերի լուսե մեղեղին...

ԶԵՅԻԲ — (սպառնազին) Զհամարձակվես մտածել դու գալ ինձ հետ միասին... Եւս մենակ կերպամ:

Զեյիբը զցում և իր վրան մի վերարկու:

ՆԱԶԼՈՒ — Հիմա՞ր, ո՞, հիմա՞ր... (տեսնելով Զեյիրի զնալը) Առաջին անգամ, առաջինն եյի, վոր աղատ կամքով, աղատության մեջ յեզ քեզ սիրեցի... Զեյիբ, Մեհմեղի վորդիք...

ՎԱՐԱԴՈՒՅՐ



Արեհլյան աղմկոտ բազար :

Արասի ոնառ ծախսող մի մարդ, շարումակ խոսում ե :

ԵԱԼԵՈՂԸ — Ռոբեմն այսպես, խաներ, բեկեր, աղաներ... Ահա անսեք, սա մի վոքրիկ բան է, բռնը վում և յերկու մատով, աչ ձեւքդ բոլորովին աղատ ե : Մի քիչ տաք ջուր, չեղավ՝ դոլ ջուր, չեղամ՝ սառը ջուր—հաշիվը մեկ ե : Թրջեցիր... Վորանդ և լաքան, ո՞վ ունի զգեստի վրա լաքա, թող բերի, հանեմ, ցույց տամ, չհավատացողները հայտան...

Մի խումբ մարդիկ իրենց զգեստների զանազան մասերը բարձրացնում են խռնվելով :

Մի ծերունի դարսիչ, վոր ման եր եկել Հնդսատանն ու Արարտան, մուսի աշխարհն ու Ֆրանկոտան, մեսնելուց առաջ յերազում տեսավ, թե ինչողես, ասածո հրեշտակը բեկերը թափ տալով, ասաց — «Վեր կաց, աստված ինձ ուղարկեց, վոր մեսնելուց առաջ այս սաղոնը հնարես, ժոտանդ թուզնես քո սերնդի մարդոց և թող նրանք ել քեզ նման աշխարհէ աշխարհ ման դան և այս սաղոնով արտաներ մաքրեն... Թող մեղավոր մարդկությունը տեսնի, թե ինչպես, այս զգեստի վրայից արտաք մաքրվում ե, այնպես ել հողիների վրայից պետք և արտաք մաքրել... Բերե՛ք, բերե՛ք, ո՞ւմ զգեստի վրա արտա կա, ճրի... Տեսե՛ք, յեթե հայտանեցիք այս սաղոնից կառնեք, հատը մի շահի, բերե՛ք, բերե՛ք... Այ, բռնվում

և յերկու մատով, աջ ձեռքդ բոլորովին ազատ ե, մի քիչ տաք ջուր, չեղամ դուր, չեղամ սառը ջուր—հաշիվը մեկ ե:

Այդ միջոցին խակահատները համում են մի խնի մարդկանց խակները:

Հրապարակի մի այլ կողմը: ՅՈՒՍՈՒԹԸ նըստած ե գրելու դարակի մոտ, ծնկամփոփ: Գալիս են յերեք գյուղացի:

Ա. ԳՅՈՒՂԱՑԻ — ԽԵԼՔԴ միշտ խորունկ, գրէչդ աղդութով թո'զ լինի, Միրդա:

ՅՈՒՍՈՒԹ — Արեներդ վառ, որերդ յերկար լինի, ժողովուրդ:

Ա. ԳՅՈՒՂԱՑԻ — ՅԵԿԵԼ ենք քեզ մոտ, վոր մեր ցավերին մի դարման անես, ա'յ Միրդա Յուսութ:

ՅՈՒՍՈՒԹ — Իմ գլխի վրա դա իմ պարտքն ե. յես պարտական եմ իմ ժողովրդին... Ի՞նչ եք ցանդ:

Ա. ԳՅՈՒՂԱՑԻ — Ինձ մի հատ նամակ... որանք մեր գեղից հենց նոր են յեկել... չատ ե, վատ, շատ վատ... կինս մեռել ե...

ՅՈՒՍՈՒԹ — Գերեղմանի հողը թող դալար լինի...

Ա. ԳՅՈՒՂԱՑԻ — Որերը քե'զ, Միրդա Յուսութ... Հիմի մնացել են դյուղում աղջիկս ու պստի աղաս, հա'... Հող չունենք գիտես, յես ել այստեղ նոքյար եմ, բեկի մոտ, մի բերան հացով... Հիմի մի հատ արիզա դրի իմ աղին, վոր ինձ թողնի գեղ գընամ... Մի նամակ ել դրի յերեխանցս, վոր չուտով դեղ եմ դալու... Դու գիտես մեր ցավը, ա'յ Միրդա Յուսութ (աննկատելի փող ե դնում Յուսութի նստած բարձի տակ):

ՅՈՒՍՈՒԹ — Զուխտ աչքիս վրա (գրաւմ ե):

Հրապարակի մի այլ կողմը: Շարբար ծախող:

ՄԱԽՈՂԻ — (Յերգելով) Շարբաթս և քաղցր, համեցէք խնդրեմ... մեկ շահի, սարերի անհալ սառույցից... շարբաթս և քաղցր, մեկ շահի...

Շարբաթս և քաղցր, պեսզիս դույներով, Բարձր սարերի անհալ սառույցով.

Նուռ ու սերկելիիլ, ընտիր ծիրանից.

Շաքարը՝ Շամից, միրգը՝ իրանից:

ՄԻ ԽՄՈՂ — Ես շարբաթդ վատ ջրից ե, մեջն ել հասարակ ներկ ես գրել, շաքար ել չկա:

ՄԱԽՈՂԻ — Մեկ չե՞... Ամեցի՛ր, դնա՛:

ՄԻ ԽՄՈՂ — Մկի ել մեկ չե: Թե վոր դու խսկապես սարերի անհալ սառույցից, շաքարով ու մրդով շինած լինելիր քո շարբաթը, յես հիմի մեկի աեղ յերկու կիսմելի. Հետո, ուրիշ անդամ ուրիշից չելի խմի, քեզնից կիսմելի. իսկ հիմա չեմ խմելու... Տեսա՞ր, վոր մեկ չե, հասկա մտածի՛ր:

ՄԱԽՈՂԻ — (Անտարբեր) Այ բալա՛մ, աշխարհը մեծ է, մարդիկն ել շատ. թե ամեն մեկը մի անդամ խմի, յես ելի կապրեմ, ի՞նչ եմ կորցնում... հիմի ել դու դնա ու քիչ մտածիր: (Յերգելով) Շարբաթս և քաղցր, համեցեք խնդրեմ... և այլն:

Հրապարակի մի այլ կողմը: Մտնում են Մերյե Կուլարի մարդիկը:

ԱՌԱՋԻՆ — Զեկոսի Կուլարը:

ԵԵՐԿՐՈՐԴ — Այս', ուշացամ:

ԵԵՐԲՌՈՐԴ — Զլինի՛ մի վատ բան և պատահել:

ԶՈՐՅՈՐԴ — Կուլարին վոչինչ չի պատահի: Ելի մը
սկսի բռւի նման վայ կարդալ:

ԱՌԱՋԻՆ — Գնաց արքունի ախոռապետի հետեւից:

ՅԵՐԿՐՈՐԴ — Նրանք ել չեկան:

ՅԵՐՐՈՐԴ — Կդա՞ն:

Ներս ե մտնում ԿՈՒԼԱԲԸ, արագաշարժ,
հուծելու և ահազդու:

ԲՈԼՈՐԸ — Կուլարը... (Խմբվում են մրա շուրջը)
Հը...

ԿՈՒԼԱԲ — Աըս... Լսեք, դալիս են: Նրանք ծախեցին արքունական ապրանքը և ստացան փողերը:

Դուք յերկուող կիանդնեք այս կողմը, իսկ դուք՝
յերկուող այն կողմը: Հենց վոր յեկան, կմոտենաք՝ դաշույնները կողերին. իսկ մնացյալը հեշտ է:

ԱՌԱՋԻՆ — Այստեղ, հրապարակո՞ւմ:

ՅԵՐԿՐՈՐԴ — Կդուան, ողնություն կիանչեն:

ՅԵՐՐՈՐԴ — Ֆերրաշները մոտ են, կհասնեն:

ԿՈՒԼԱԲ — Վէրջ: Կանեք այնպես, ինչպես ասացի: Մնացյալը թողեք ինձ: Դաշույնները պատրաստ՝ դեհ, յես դնացի (հեռանում ե):

Չորսը անկյուններ են գրավում: Հեռվից գալիս են արքունի ախոռապետ Հուսեյին խանը և արքունի մատոկարար Հարիբ խանը, ուրախ, ծիծաղկոտ:

ՀՅՈՒՍԵՅԻՆ ԽԱՆ — Լա՛վ եր, շատ լա՛վ եր, ալլա՛վ վկա՛:

ՀԱԲԻԲ ԽԱՆ — Խիզճն ել լավ բան ե, Միրզա Հյուսեյին խան. արքունի ձիերի մի տարվա կերը չեր կարելի վաճառականներին ծախել:

ՀՅՈՒՄ. ԽԱՆ. — Իսկ բահակին աված քո ցորենի մեջ
կարելի՞ն յեր կիսով յափ հող լեցնել։ Քիչ եւ
աստծուց վախեցի՞ր, հողի ունես տալու։
ՀԱՅԻԲ. ԽԱՆ. — Հոդուս համար յես մեսչիտ ևմ չինել
ավել, վորտեղ որբ հինդ անդամ նամաղ և կա-
տարվում։

Ա. ԿՈՒԼԱԲՈՒ. — (Մուրացկան կեղծելով) ԱԾՎԵ զա-
վակներ, քաղցած ևմ, դթացե՞ք։

Բ. ԿՈՒԼԱԲՈՒ. — Փեյլամբերի ընտրյալներ, վո-
րորմեցե՞ք։

Գ. ԿՈՒԼԱԲՈՒ. — Սոված Էնք, խղճացե՞ք։

Դ. ԿՈՒԼԱԲՈՒ. — Գթացեր, վողորմեցե՞ք։

ՀՅՈՒՄԵՅԻՆ ԽԱՆ. — Ես վորտեղի՞ց հավաքվեցին։
Կորե՞ք, ասոված առա։

ՀԱՅԻԲ. ԽԱՆ. — Դե՛ւ, դ՛ւ՛ւ, կեղասու զդեստներով մի-
մառենաք մեղ։

Արդեն դաշույնները նրանց կողերին և դրված։
Էայտնվում են ԿՈՒԼԱԲՈՒ։

ԿՈՒԼԱԲ. — (Ահարին) Մզրախ Մերյե կուլար Շիր-
դաղի անունից հրաման։ Հանե՞ք ձեր քսակները։
Սարսափ ախոռապետի և արքունի մատակա-
րարի մեջ։

ՀՅՈՒՄԵՅԻՆ ԽԱՆ. — Խնայեցեք ինձ, յես յերեխաներ
ունեմ։

ՀԱՅԻԲ. ԽԱՆ. — Իմ կինը ջաւել և, դթացեք ինձ։

ԿՈՒԼԱԲ. — Շո՛ւտ, ձե՛ր փողերը, յեթե չեք ուղում
ձեր կյանքն իլ վրա տալ։ Շո՛ւտ, տառմ ևմ, թե
չե՞...

ՀՅՈՒՄԵՅԻՆ և ՀԱՅԻԲ հանում են խակները
և տալիս, ծնկի չոքելով։

ՀՅՈՒՍԵՑԻՆ ԽԱՆ — Վողորմացեք, մեղք ենք:

ՀԱԲԻԲ ԽԱՆ — Խեղճ ենք, դթացեք:

Բ. ԿՈՒԼԱԲԱԿ — Կորե'ք, աստված տա՛:

Ա. ԿՈՒԼԱԲԱԿ — Դե՛հ, դե՛հ, կեղտուա զգեստներով
մի մոտենաք մեզ:

Կուլաբն ու մարդիկը՝ հեռանում են:

ՀՅՈՒՍԵՑԻՆ ԽԱՆ — (Ապուշ կտրած) Հը... սրան
ի՞նչ կասես:

ՀԱԲԻԲ ԽԱՆ — Փա՛ռք ալլահին, կարծես թե վողջ
ենք:

ՀՅՈՒՍԵՑԻՆ ԽԱՆ — (Ուշքի գալով) Տարան, ավա-
զակները, փողերս տարան:

ՀԱԲԻԲ ԽԱՆ — Գնաց, Հայով յեկածը, Հույով ել
դնաց (հոմիկարծ տեսնելով պահակին, վոր բանից
անտեղյակ գալիս ե) Հայման, իշխ կտոր, ո՞ւշ
եյիր կորել:

ՊԱՀԱԿ — Վոնց ովոր հրամայված ե՝ տիրոջա իրերն
եյի պահպանում:

ՀՅՈՒՍԵՑԻՆ ԽԱՆ — Լավ ես պահպանում: Ինչո՞ւ
Համար դու Հաց ես ուտում, Հա՞ (լսիում ե):

ՀԱԲԻԲ ԽԱՆ — Ինչի՞ն յես պետք, եշ դյուզացի (սկը-
սում ե ծեծել):

Աղմուկ, աղաղակ, հավաքվում ե ծոզո-
վուրդ:

ՀՅՈՒՍԵՑԻՆ ԽԱՆ — Տարա՛ն, բոնեցե՛ք, կողոպտե-
ցին...

ՄԵԿ. — Ի՞նչ կա, ի՞նչ ե պատահել:

ՄԻ ՈՒՐԻՇ. — Ովքե՞ր տարան, ի՞նչ տարան, ո՞ւժ
կողոպտեցին:

ՀԱՅԻՒՄ ԽԱՆ — Այլաղակները, Մէրյի կուլաբը, մարդասպանները:

ՀՅՈՒՍԵՑԻՆ ԽԱՆ — Գնանք թաղավորական ողալարը, իմաց անենք: Զի կարելի որը ցերեկով, աղնվականներին կողոպտել (գնում են):

ՄԵԿԻ — (Պահապանին) Վե՛ր կաց, բարեկամ, կաց, վերքե կապեմ:

ՄԻ ԳՅՈՒՂԱՅԻ — Աստված վոր մեզ ստեղծել և, աղաների վոտի հող և ստեղծել (մոտեցող սեյիդին). Աղոթք արա՛ մեղ համար, սեյիդ, աղոթք արա՛:

ՄԵՅԻԴ — Մեծ և ալլահի կամքը... ամեն ինչ կատարվում և ալլահի կամքով: Շատացել են մեր մեղքերը, թուլացել և խլամի հալատը և աստուծո ուստիժը ընկնում և և' անմեղի և' մեղավորի վրա: (Սուտ լաց լինելով) Խոլամի վորդեներ, բաց արեք ձեր կուրծքը, արցունք թափեք, ձեր մարմինները տանջեցեք, ապաշխարեցեք... Ինչ վոր ունիք պահած ձեզ մոտ, դուրս բերեք և ուխտի դնացեք... և աստված կեների ձեզ, ձեր աշխատանքը առառ կլինի, ձեր տերերը քաղցր կլինեն և բարենորհ, յերեսներդ կբլեյին դարձրե՛ք, աղոթք արե՛ք, աղոթք արե՛ք...

ՅՈՒՍՈՒՖ — Սուտ եռ խոսում, մա՛րդ, հերիք ոյս թշվառ մարդկանցը խարես:

ՄԻ ՔԱՆԻՍԼ — Յուսուֆն և, Միրզա Յուսուֆը, ճանապարհ ավեք:

ՅՈՒՍՈՒՖ — Հերի՛ք և, ժողովուրդ, թույլ տաք ձեզ խարել: Դուք թաղվել եք թշվառության մեջ, իսկ այս խարերտն ձեզ ասում և — ձեր ունեցածը ուխտառեղիներին նվիրեք:

ՍԵՅԻԴ — (Կատաղի) Փեյզոմբերի ղավակներ, լսեցի՞ք... ահա ձեր մեղքերի աղբյուրը, ձեր թշշվառության պատճառը... Սա մի դե և մարդու կերպարանքով, հալածեցն'ք նրան, քարեր վերցրեք և քարկոծ արեք... Ալլահը կների ձեզ և բախտի դռները կբացվեն ձեզ համար։

ՄԵԿԻ — Ո՞ւմն եք քարկոծում։

ՈՒՐԻՇԻ — Զհամարձակվե՞ք։

ԱՅԼԻ — Եւթե նա դե և, դիմին տանք դնա։

ՄԻ ԱՅԼԻ — Կմորթեմ նրան (քարեր են վերցնում)։

ՅՈՒՍՈՒԹ — Ժողովուրդ, յես ձեր բարեկամն եմ...։

ՄԻ ՔԱՆԻՍԼ — Սուս կացն'ք, լսե՞ք։

ՅՈՒՍՈՒԹ — (Կուրծքք բաց անելով) — Քարկոծեցի՞ք, ժողովուրդ, յես թող մեռնեմ, բայց կա մի ճշմարտություն, վոր կապրի հավերժ։ Իմ ժողովուրդ, յես տեսնում եմ ձեր թշշառությունը... Մի՞թե դուք ձեր յերեխաների վերջին պատառը պետք և խիեք և այս խարերաներին նվիրեք։ Ինչէ՞ յեն պետք նրանք... Նրանք պետք են, վորպեսզի ջաննաթի ու ջաննամի մասին սուտեր պատմեն ձեզ և իրանք կուշտ-կուշտ վորերով բամբուլե բարձերի վրա մուշ-մուշ մշտին...։

ՄԵԿԻ — Ճիշտ և խոսում այս մարդը։

ԱՅԼԻ — Թող ջաննաթին չհայհոյի։

ՍԵՅԻԴ — Ով մուտուլմաննե՛ք, Ալիի, Հասան-Հուսեյինի ղավակներ. այս հրեշը չի հավատում աստծուն ու մարդարեյին, նա նախատում և նրա ծառաներին, նու մի դայլ և դառան զգեստով, արտաքնահարդար բաժակ անմաքուր, խալարասը-

նուևնդ, ծաղր և տեսողաց: Նա իր խոսքերով
պղծում և ականջները, յեղծանում մտքերը և իր
ախտածեա շունչով ապականում և ողը... Քար-
կոծ արեք նրան և կամ հեռացե՞ք, հեռացե՞ք (հե-
ռանում և ահազնատեսիլ):

Ժողովրդի մի մասը ուզում և շարժվել:

ՄԻ ՎԱՃԱՄ-ԱԿԿԵՆ.—Այդ ո՞ւր եք շաբավում...Միրզա
Յուսուֆը արդար եր խոսում: մեղնից ո՞վ ե, վոր
չի նեղվում: Զեն թողնում կարդին առևտուր ա-
նենք:

ՄԻ ԱՐՃԵՍՏԱԿՈՐԻ.—Աշխատի՛ր, աշխատի՛ր ու սոված
քնիր... իսկ առանց մեղ, արհեստավորներիս աշ-
խարհը չի դառնա:

ՄԻ ԳՅՈՒՂԱՑԻ.—Հող չկա, հող... Թաղավորը թող
մեղ հող տա, հաց ել կլինի, ամեն բան ել:

ՅՈՒՍՈՒՅԻ.—Իրանի թշվառ դաշակներ, ջաննաթա-
յին մեր այս յերկիրը աղքատացնել ե, գործունյա
մարդիկ դաղթում են ուրիշ յերկրներ: Իմ խոս-
քերը ձեղ համար են, ժողովուրդ, արդարու-
թյուն կանչեցեք, վորանդ կա արդարություն,
այնահզ ազատություն կլինի. յեղբայրական սի-
րոյի կտորվեցեք միմյանց և հալասարություն թող
տիրի կյանքում:

ՄԵԿԻ.—Խոսիր, Միրզա Յուսուֆ, լուսավորիր մեր
միտքը:

ՈՒՐԻՇԵՐԻ.—Բաց արա սիրադ և մոտեցրու մեր սըր-
տերին:

ՅՈՒՍՈՒՅԻ.—Իմ սիրար բարի յե, ժողովուրդ, և իմ
հողին բաց բոլորի համար: Յես հավատացած
իմ ճշմարտության ուժին և այդ քարոզում իմ
իմ ժողովրդին... ինձ մատ են դալիս նրանք, վո-

բոնք վիշտ ունեն, վորոնց հոգիներում արքաներ
կան թաղված...

Ներս և մտնում հանկարծ կուլարը իր մարդկան-
ցով :

ԿՈՒԼԱԲ.—Աղքատ մարդիկ, ինձ լսեք:

ԶԱՅՆԵՐ.—Կուլարն ե... Շիրզադը... ավաղակը...
քյասիբների բարեկամը:

ԿՈՒԼԱԲ.—Քիչ առաջ յես այստեղ թեթևացըի յեր-
կու աղնվականի, թշվառներին կողոպտող յերկու
սրիկաների: Նրանց փողը ինձ մոտ ե... Վերցրեք,
նրանք ձերն ել են, ձեր իրավունքը... (փողեր և
նետում) ՄԵՆՔ հեռանում ենք, չասեք, վոր մեզ
տեսել եք, իսկ ով վոր մատնի, կյանքով կտուժի:

ՅՈՒՍՈՒԹ.—(Գնացող կուլարին կանգնեցնելով).

Թանկադին կուլար, իմ անվախ ընկեր, մենք այս
յերեկո պետք ե հավաքվենք ծերուկ Աշբաֆի բը-
նակարանում:

ԿՈՒԼԱԲ.—Դիտեմ այդ, Յուսուֆ, վորոշված ժա-
մին կաշխատեմ լինել ձեղ հետ միասին:

ՅՈՒՍՈՒԹ.—Այո՛, աշխատի՛ր: Խոսելու համար
խիստ շատ բաներ կան:

ԿՈՒԼԱԲ.—Գործելու համար—շատ ավելի շատ: (Գըլ-
խով և ամում ընկերներին) Դեւ, մենք դնացինք:
կուլարը իր մարդկանցով հեռանում ե: Հեռվից
լսվում ե շեփորների ձայն:

ՄԻ ՄԱՐԴ.—Ֆերաշներ են գալիս:

ՈՒՐԻՇԸԼ.—Սուրհանդակներ, դըռչներ...

ԱՅԼԻԼ.—Փախչենք, թե չե լավ չի լինի:
Յուսուփը մնում և մենակ:

ՅՈՒՍՈՒԹ.—(նայելով) Այս ի՞նչ ե, բոլորը ձիերից

իջան. այստեղ են գալիս. թող զան, յես չեմ
վախենում . . .

Պալատական բափորը գալիս ու կանգնում է
Յուսուֆի առաջ:

Ա. ՄՈԼԻԱ. — (Ձեռքերով նշան և անում, շեփորները
լռում են) Ով, Միրզա Յուսուփ, Շահ Զեյխը ար-
քան հրաժարվելով թադից ու զահից, իր աղաս
կամքով; իրանյան զահի տերը քեզ կարգեց:
Բարեհաճիր արքունի պալատը դալ, վորակեսղի
հանդիսավոր կերպով զահ բարձրանաս:
ՅՈՒՍՈՒՖ. — ՅԵ՞ս . . . յԵ՞ս . . . ուս ի՞նչ և նշանա-
կում . . .

ՄԵՎԼԱՆԱ. — (առաջ անցնելով) Տեր իմ, ժողովուրդն
ուզում և իր բարեկամին տեսնել զահի վրա:
Այսուը քո իշխանությունը ընդունված և ամրողը
իրանում: Համեցեք, ինչպես առաջարկել և ավագ
մոլլան, չնորհ բերել արքունի պալատը, հանդի-
սավոր կերպով, զահ բարձրանալու:

ՅՈՒՍՈՒՖ. — Մելիանա . . .

ՄԵՎԼԱՆԱ. — (ծառաներին) Հաղցրեք արքայական
զգեստները աշխարհի ապաստանին:

Յերածշտուքյուն: Ծառաները հազցմում են
Յուսուփին, իսկ նա, իլու, հնազամիդ և:

Մինչև համդերձավորումը վերջանալը, բա-
նաստեղծներ իրանց հորինած գովքն են յերգում:
Ա. ԲԱՆԱՍՏԵԴՅ. — «Տարիներ բազում, արեն և ծա-
ղել և լույս և ավել իրանյան յերկրին այս դրախ-
տային,

«Ապակայն չի փայլել յերկնակամարում այնպիսի
արև,

Վոր նման լինի Յուսուփ արքային»:

Բ. ԲԱՆԱՍՏԵՂԾ — «Զկա, չի յեղել և չի լինելու մի
այլ իմաստուն, ոժտված բազում ձիրքով մարդ-
կացին...

«Խելք անշափելի, սիրտ խորախորհուրդ և կամք
աներեր, վոր նման լինի Յուսուֆ արքային»:

Գ. ԲԱՆԱՍՏԵՂԾ — «Վոչ Դարեհ, Խոսրով, վոչ Խո-
կյանդարը, վոչ ել Նուրջիվան, վորոնք բաղմել են
Իրանյան դահին,

«Վոչ մեկը փառքով, գործերով արդար, չի փայ-
լել այնպիս, վոր նման լինի Յուսուփ արքային»:

ԱՎԱԳ ՄՈԼԼԱ — (Թագը դնելով Յուսուփի գլխին)
Կեցցե՛ մեր Յուսուփ նորընաիր արքան:

ԲՈԼՈՐԸ — Կեցցե՛:

ՅՈՒՍՈՒՖ — (մի քայլ դեպի Մեվլանան առնելով)
Մեվլանա:

ՄԵՎԼԱՆԱ — Ժողովուրդ, ցնծա՛ և ուրախացի՛ք...
Կամոքն աստրծուայժմ իրանյան դահին իշխում և
քո հարադատը և քո պաշտպանը, կոչեցեք բոլորդ
կեցցե՛ մեր Յուսուփ նորընաիր արքան:


ԲՈԼՈՐԸ — Կեցցե՛...

Գահավորակը մոտեցնում են և նստեցնում
Յուսուփին:

ԶԱՅՆԵՐ — Դեն կացեք... Դեն կացեք...

Շեփորմեր, երբինմեր, քնդանորմերի վողջույն:

ՎԱՐԱԳՈՒԽՐ



ՅԵՐԵՌՈՐԴԻ ԱՐԱՐՎԱՆ

Ա. ՊԱՏԿԵՐ

Պակատում դահլիճն : Յուսումքը նստած ե գա-
հին , ավագանին կանգնած :

**ԱՎԱԴ. ՄՈԼԼԱ. — ՅԵՐԿՐպագե՞ք աշխարհի ապաստա-
նին :**

Բոլորը յերկրպագում են :

**ԲՈԼՈՐԸ. — Թո՞ղ արքայի շլաքը մեր վրայից անպա-
կառ լինի :**

**ՄԵՎԱԼԱՆԱ. — Իսկ այժմ թողեք հանդիսա արքայից
արքային :** (Բոլորը վոտքի) **Թո՞ղ յերջանկությունն
ու անդորրը անպակաս լինեն աշխարհի ապաստա-
նից և թող զիշերը եր բյուր բարիքը շատրվաննե...
կեցցե՛ Յուսումք արքայից արքան :**

ԲՈԼՈՐԸ. — Կեցցե՛ Յուսումք արքայից արքան : (Գը-
նում են) :

Դռան առաջ կանգնած են ներքինիներ , Փերրաշ-
ներ , Խոջա Մուրարեֆ և Ազրմ բեկը :

ՅՈՒՍՈՒԹ. — Ո՞վքեր եք դուք :

ԽՈՉԱ ՄՈՒԹ. — (առաջ գալով) Մենք տիրոջս հարե-

մի հեղ, Հավատարիմ ներքինիներն ենք: Յես,
Խոջա Մուրարեքս, նրանց պետք:
ՅՈՒՍՈՒԹ — (Ազըմ բեկին) Խակ դո՞ււք:
ԱԶԲՄ ԲԵԿ — ՄԵՆՔ, քո անձնապահ և Հավատարիմ
զորականները, յես, Ազըմ բեկս, նրանց պետք՝
պատրաստ միշտ ծառայելու:

ՅՈՒՍՈՒԹ — Խավ... լավ... լավ: Ազըմ բեկ, խնդրեմ,
բարի յեղիր, դնա Գյուլ Բուլաղ և Հարց-
րու այնանդ ծերուկ Աշրաֆին: Նրա տանն են իմ
ընկերները: Հատուկ կիսնդրես նրանց բոլորին,
վար խկույն և եթ ինձ մոտ շտապեն:

ԱԶԲՄ ԲԵԿ — Դիլիսիս վրա, արքայից արքա: (Դուրս):
ՅՈՒՍՈՒԹ — Խոջա Մուրարեք; թո՛ղ բոլորը դնան ու
Հաղոստանան, խել ինքու մնան: (Մյուսները գնում
են) Խոջա Մուրարեք, ցույց տուր ինձ խնդրեմ,
այս մեծ պալատի ներքին վայրերը:

ԿՈԶԱ ՄՈՒԲ — Արքայից արքան թող չնորս բերի և
յես ցույց կտամ պալատում յեղած այն սենյակ-
ները, վորտեղ պահված կան մեծն իրանի փառքն
ու դանձը (նանապարհ և տալիս, գնում են):

Ներս և մտնում Անրէինի Մուֆադդալը, վո-
տի ծայրերի վրա, զգույշ:

ՄՈՒՅԱԴԴԱԼ — Ո՛ձ, աղքե՛ս, կատո՛ւ, պառավա՛ծ
կտառու, վորը շարունակ իր չորս թաթերի վրա
յե քնինում... Նոր թաղավորը հենց յեկավ թե
չե, հինը մոռացավ: Հիմի ել սրա վեշերն ե լի-
զում... Խոջա Մուրարեք, ինչի՞ յես պետք դու,
ինչո՞ւ յես ապրում... Քէշմիշի նման քաղցր
խոռքերով բոլորի առաջ սարուկ և դառնում,

Հլու, անզինաս, հնազանդության հավատ ներշընչում, բայց ինքնավստահ խրոխտ տերերին, թագուն ու անտես, ինքն ե իշխում։ Անփոփոխ արքա, լավի տեսքով վատ, ստրուկի տեսքով տեր ու տիրական, վորը ինձ նման ներքինուա անդամ զզվանք ե աղղում։ Հիմի, յես դիտեմ, նախորդ շահին նա վատաբանում ե։ Քո այս նոր տերը, Խոջա Մուբարե՛ք, սիրով կլսի քո տեղեկանքը։ Նույնիսկ զզվելի դեմքիդ կժուտա, բայց մի՛ մռանա, մատնիչի դեմքը ցեխոտ ջրերից սառուցի փոխված մաքրություն ունի։ Յերբ ժամանակը, իր ջերմությամբը, նրան կլուծի, զովարար սառցի տված հրճվանքը զզվանք կդառնա։ Մատնիչի հանդես ամեն մի աղնիվ մարդու ներսությում ատելություն կա։ Յեթև չատի ել, չի հարդի յերբե՛ք և այն ժամանակ, Խոջա Մուբարե՛ք, դո՛ւ նրան կտտես, կըզղջաս, կայրվես, քո հին տիրոջը նորից կիննտուս, քո հին տիրոջը՝ մեծ Շահ Զեյթիրին... Նա հեռացել ե, բայց նորից կզա։ Յես հավատում եմ աստղերի ուժին։ Շահի թաղնված բնակարանի վայրը ինձ միայն վստահացել են, վոր կասդ պահողանեմ, պալատի դաղոնի անցուղարձերից միշտ տեղյակ պահեն։ Կանցնեն քիչ որեր ե քո պաշտոնը, Խոջա Մուբարե՛ք, իմ ձեռքը կընկնի։ Պառավել ես դու... Հերի՛ք ե, ինչքան մեր պետը յեղար. տեղ տուր նորերին... Վողեվորվեցի... Իղուր, Մուֆաղլա՛լ, այստեղ ինքը քեզ, հիմարի նման, լեզու յես մաշում... Բայց թե ի՞նչ անես, յերբ անհրաժեշտ ե, մարդիկ, յերբեմն, հարկից ստիպված, բարձր են

ժտածում... Բայց սը՛ս... դալիս են... Պետք է
հեռանամ: (Վոտմերի ծայրով դուրս ե զնում):
Վերադառնում են Յուսուփը և Խոջա Մուրա-
թեֆը:

ՅՈՒՍՈՒՖ: — Ուրեմն, այդպէ՞ս... բայց հանկարծա-
կան բարձրացումիցը շփոթ և դալիս, դլուխս
պտավում...

ԽՈՐԱԿ. ՄՈՒԲԻԲ: — Թող ինձ թույլ տրվի տիրոջս ասել,
վոր կյանքում վո՞չ մի արտասովոր դեպք գոյու-
թյուն չունի: Մարդիկ մարդիկ են, վոչ վոք չե՞
ծնվում իշխելու համար, միշտ փոփոխական
կյանքի ալիքը մեկին շատ վերև բարձրացնում ե,
մյուսին ներքեւ... Այդպես ել յեղավ: Վա՞յ
նրան, ով զոր չի կարողանա բարձրացման կետին
իրան պահպանել մինչև կյանքի վերջն: Փա՞ռք
մեծ ալլահին, զու մեծացել ես ժողովրդի մեջ և
ժողովուրդ, արժանի պատվով, քեզ իրա տերը,
արքան ճանաչեց... Դու պարտավոր ես արքայի
վայել բարձունքի վրա քեզ ընդմիշտ պահել...
Վոչ մի շփոթմունք կամ դլխապտույտ... Քո խո-
նարհ հառան քեզ միշտ պատվանդան: Դի՞ր քո
սուրբ վոտը այդ պարլանդանին և յերջանկորեն
քո արքայական կյանքը վայելիր:

ՅՈՒՍՈՒՖ: — (Գրիքը ինքնիրեն) Հեշտ դործ չե, սա-
կայն, մի մեծ պետություն լավ կառավարել:

ԽՈՐԱԿ. ՄՈՒԲԻԲ: — Անք կհեշտացնենք այդ դործը, տեր
իմ:

ՅՈՒՍՈՒՖ: — (հանկարծ) Այսինքն, ո՞վ մենք:

ԽՈՐԱԿ. ՄՈՒԲԻԲ: — Խմաստուն տերս ե...

ՅՈՒՍՈՒՖ: — Յե՞վ...

ԽՈՉԱ. ՄՈՒԲ — Յեկլ իր մտերիմ բարեկամները, վորոնց անհամբեր սպասում են նա... վորոնց գալքատյան վոտնաձայնները արդեն լավում են:
Մտմում են Յուսուփի ընկերները և սրտագին վողջազուրկում են:

ՅՈՒՍՈՒԹ — Յեկե՛ք, թանկաղին իմ բարեկամնե՛ր, յես ձեզ կանչեցի... Բայց, կացեք տեսնեմ, ո՞ւր և կուլարը, մի՞թե ձեզ հետ չեն: Վորքան հիշում եմ, նա պետք է այսոր ձեզ հետ դիշերեր:

Մ. ԶԵՄԻԼ — Մեզ հետ եր, այո՛... բայց... ինչպե՛ս առեմ...

ՅՈՒՍՈՒԹ — Ինչո՞ւ լուեցիր...
ԶԵՔԻ — Կուլարին ինքներդ լավ եք ճանաչում...
Մենք ուրախ եյինք անչափ, անսահման... իսկ նա, կուլարը...

ՅՈՒՍՈՒԹ — Ի՞նչ, կուլարը ի՞նչ... Դե՛ շուտ ասացեք:

ԹԱՄՄՅԱՆ — Իր ձեռքում բանած հողե բաժակը զետին շպրտեց ու ցրիվ փշրեց: Մենք մեր յերջանիկ բախտովիք հարրած, վոչինչ հասկացանք: Նա անվերջ լուռ եր, մինչև քո դրկած զորականն եկավ, մեզ շատադ կանչեց:

ԿՈՒՐԲԱՆ ԲԵԿ — Այդ ժամանակ, նա, գլուխը դարձրեց և տիուր ասաց — ՀՅՈՒՈՐԴ գնացեք շահի պալատը, յես սարի մարդ եմ, պալատի ողը ինձ համար ծանր ե... Յես մի բարեկամ Յուսուփ ունեյի, վորից խարվել եմ... Այժմ նա չկա... Մեռավ ինձ համար... Այժմ միայն կա թաղավոր Յուսուփ, վորը, իհարկե, բոլոր շահերի նման, պետք և իմ թշնամին լինի»:

ՅՈՒՍՈՒՅ — Թշնամին... Ինչպես: Միթե չառացիք, չասացի՞ք նրան, վոր մարդը մարդ է, թե կուղ թագավոր:

ՄԻՐԶԱ ԶԵՄԻԼ — Ինչպես չասացի՞ք:

ՅՈՒՍՈՒՅ — Ի՞նչ պատասխանեց:

ՄԻՐԶԱ ԶԵՄԻԼ — Լաց լինելու պես յերկար ծիծագեց, հետո, խելագար մի հայացք ձղեց, ասաց կոտադի — «Դնացե՞ք դուք ձեր թաղավորի մոտ»: Ներուի Աշրաֆը ուղեց նրա մոտ մնալ — համոզել, բայց քո ուղարկած զորականն այնպես շատպեցրեց, վոր թողինք յնկանք:

ՅՈՒՍՈՒՅ — Տարրինակ և... Անհասկանալի ու զարժանալի... Իմ սիրած մարդը, միշտ գնահատած Մերյե Կուլարը, տարրինակ և... (Կամչելով) Ազըմ բն'կ, շտագ կղնաս բարա Աշրաֆի բնակարանը, այնաև կղտնես Մերյե Կուլարին, կասես, վոր կրկին-կրկին խնդրում եմ, վոր շնորհ բերի իր բարեկամի համեստ պալատը: Կասես, բոլոստ և ամենից շատ ինքս, անհամբեր սպասում եմ իր յերջանիկ տեսքին:

ԱԶԲՄ ԲԵԿ — Գլխիս վրա, տե՛ր:

ՄԻՐԶԱ ԶԵՄԻԼ — Իսկ յեթե նորից համառի, չգա՞:

ՅՈՒՍՈՒՅ — Համառին... չգա՞... (Ազըմին) Այդ դեպքում. վերցրո՞ւ հետդ. Փերրաշներ, բռնի բեր նրան...

ԱԶԲՄ ԲԵԿ — Գլխիս վրա, տե՛ր:

ԵԵԲ ԱՇԲԱՅ — (Ազըմին) Կա՞ց, մի՛ շտագիր: (Յուսուփին) Թո՞ղ սա դրսումը մի քիչ սպասի:

Ազրմը դուրս և գնում :

Սիրելի Յուսու՞ւֆ, յես քեղնից ծեր եմ, թուշ
բախտը աչքեղ լույսը չփակի : Այդ ի՞նչ ես ո—
նում, Կուլարին, գիտես, վաղուց եմ ծանոթ :
Զաման իւանն անդամ, իր զինվորներով, չկարո—
ղացավ նրան ձեռք դցել : Հիմի կարծում ես,
ուսանյակ ֆերաշով, կարո՞ղ կլինես բանի բերել
տար... Բոնի՞... ի՞նչ խոսք առացիր Կուլարի
մասին : Լավ սկիզբ չեր այդ : Ես ինքս կերթամ:
Մերունի մարդ եմ, յերկար տարիներ աղ ու հաց
կերած, յես կհամողեմ, կրերեմ նրան : Նա կա—
տադի յե, համառ ե, ճիշտ ե, բայց ծեր ընկերոջ
ջերմ աղաչանքին ավելի շուտով թերես լսի, քան
թե քո զրկած... Լավ, յես զնացի...

ՅՈՒՍՈՒՖ — Ինձ չհանկացար, ծերունի Աշրաֆ,
Կուլարին յես միշտ սրտանց սիրել եմ : Իմ ցան—
կությունն ե նրա հետ խորհել, նրա հետ զործել:
Ինքս, ուրախությամբ անձամբ կերթայի, բայց...
այժմյան դիրքս... Վերջապես քիչ ել հանկանալ և
պետք... հարմար չի' վինի... դիտող աչքեր
կան... Լավ, քանի վոր դու այլպես վստահ ես,
վոր Կուլարը քեզ հաստատ չի' մերժի, ունա՛ նրա
մոտ : Շնորհակալ եմ...

ՄԻՐԶԱ ԶԵՄԻԼ — Գնա՛, համողի՛ր :

ԶԵՔԻ — Մեր կողմից խնդրի՛ր :

ԿՈՒՐԲԱՆ — Մենակ չդառնաս :

ՄԵՐ ԱՇՐԱՖ — Լավ, խոսք եմ տալիս (գնում ե) :

ՅՈՒՍՈՒՖ — Զեյի ուզենա, վոր մեր պետության
առաջին որին, այսպիսի ներքին անախորժ ունալ-

զած տեղի ունենար : Բայց լավ կլինի , յերբ ամեն մի բան լավ ել վերջանա : Նրան կհանձնեմ մեր յերկրի զորքը . փորձված մարդ և ռազմի արհեստում . կարիճ ու խիզախ , վորին կարող ենք մենք մեղ վստահել : Մեր մոտ հարևան սսմանցիւները և կամ ջալալիք թերես փորձեն , մեր իշխանության առաջին որին , սահմանը նեղել : Կուլարը , անշուշտ , նրանց դեմ կռվող միակ հարմար մարդն է :

ՄԻՐԶԱ. ԶԵՄԻՆԻ . — ՅԵԹԵ , ընդունի :

ԶԵՐԻ . — ՊԵ'տք և ընդունի :

ՅՈՒՍՈՒՅ . — Իսկ այժմ անցնենք պետության գործին : Յես ձեզ տալիս եմ խանության տիտղոս և վեղիրություն : Պետք չե մոռանալ -աղդի պատիվը ամենքից բարձր և , աղջն և այս յերկրի արժանի տերը : Պետք և բարվոքել յերկրի ապագան , պետք և մշակել արդար որենքներ , պետք և ամեն կողմ զպրոցներ բանալ , կամուրջներ շինել , ճանապարհները շտապ նորոգել , հողի մշակման , արդար տուրքերի մասին մտածել և վաճառական դործունյատ մարդկանց՝ միշտ ոժանդակել ... Խոջա Մուրարե'ք , իմ ընկերներին , այս նոր խաներին , առաջնորդի'ր այն շքեղ սենյակը , վորտեղ թանգագին զգեստներ կային ... Յուրաքանչյուրդ ընտրեք ձեզ համար հարմար զգեստներ :

ԽՈՉԱ. ՄՈՒԲԻ . — Մեծ շահնշահի հրամանովը աղա-չում եմ ձեզ ընկերանալ ինձ : (Առաջնորդում ենրանց դուրս) :

ՅՈՒՍՈՒՅ . — (Մենակ) Տարորինակ և մենակությու-

Նը: Յերբ յես քիչ առաջ ման եյի դալիս այս մեծ
պալատում, մի սենյակ տեսա, վորի պատերին և
առաստաղին վարպետ արվեստով նկարված եյին
Մաղանդարանի ահավոր դեեր և նրանց դիմաց՝
նրանց հետ կովող հին-հին դյուցազներ: Վողջ
եյությունս համակված ե այդ սոսկալի կովով,
վորը դեռ իմ մեջ շարունակվում ե, հանդիստ չի
տալիս... Դեե՛ր, դյուցազնե՛ր, դեե՛ր, դյու-
ցազնե՛ր... Մի այլ սենյակում, դարձյալ յես
տեսա, անդուկների մեջ պահված, հազլաղյուս
ու դարմանալի, հանդերձեղեններ, անթիվ, ան-
համար թանկադին ակներ ու մատանիներ... Այդ-
քան չքեզանք ու հարստություն վո՞րենդից,
ինչպե՞ս, յե՞րբ ե հավաքվել... Գանդիս մեջ կըր-
կին, ասես կովում են Մաղանդարանի ահավոր
դեեր և Պարսկաստանի հին-հին դյուցազներ...
ԽՈԶԱ. ՄՈՒԲ — (Դոնից հայտարարելով) Յերկրապա-
գեցե՛ք մե՛ծ շահնշահին:

Նոր վեզիրները մի պահ շփորվում են, բայց
զգեստը նրանց եռգերամուրյան վրա ազդած,
նրանից յերկրապագում են:

ՅՈՒՍՈՒԹ — Լա՛վ և, արէ լա՛վ և: Իդուր չե
Հազրեթը Սուլեյմանի ասած մեծ խոսքը — «Տո՛ւր
իմաստունին պատճառ, վորպեսզի առավել իս ի-
մաստուն դառնա»: Իմ նոր վեզիրներ, մեր ազդի
շահը, ճշմարտությունը, ձեզ վահան դարձրե՛ք,
թո՛ղ ջեննաթային իրանը ծաղկի և ժողովուրդը,
հարուստ թե աղքատ, մի հոր հարազատ վորդի-
ների պես, սիրով, հաշտությամբ, թող խաղաղ

ապրի : Հավատում եմ ճշմարտությանը, մի՞՛թև
չպիտի դա...

Ծերունի Աշրաֆը վերջին խօսքի վրա ներս ե
մտնում:

ԱՇՐԱՖ. — Իգա... Թեղետ և շատ դժվար յեղավ նրան
համապելն:

ՅՈՒՍՈՒՖ. — (Անակնկալի յեկած) Հավատում եյի...

ԱՇՐԱՖ. — Շատ ընդդիմացավ... Վերջին բողեյին,
ամտչում եյի ինքո ինձանից... Ասի՝ յա՞ կու-
լա՛ր, ավելի լավ ե, այստեղ, քո առաջ, անձնա-
սպան լինեմ, քան թե մենակս զնամ Յուսուֆին:
Փորձմած բան ե, տկարությունը յերբեմն ավելի
զորեղ է լինում, քան զորությունը... Կուլարը
կակղեց, ձեռիցս առավ մահատու զենքը, ա-
սաց — «Է՛ա՛վ», Աշրաֆ, խոսք եմ տալիս քեզ,
զնալ Յուսուֆին, միայն վո՛չ հիմա»:

ՅՈՒՍՈՒՖ. — Ինչպե՞ս վոչ հիմա: Յե՞րբ և ուզում
դալ:

ԱՇՐԱՖ. — Մի-յերկիւ որից: Նա ինձ խոսք ավեց:

ԶԵՄԻԼ. — Նա խոսքի տերն ե:

ԶԵՄԻԼ. — Խոսք ավեց, կզա:

ՅՈՒՍՈՒՖ. — Իսկ ինչո՞ւ համար նա խեկույն չեկավ:

ԱՇՐԱՖ. — Նա ինձ պարզ ասաց — «Շահերի համար
թանել ե զլուխս, քեզ խոսք եմ տալիս, գիշերով
դնալ, դանել իմ մարդկանց և նրանց վերցրած,
դալ, ներկայանալ»: Բայց, նա կարեւոր մի պայ-
ման դրեց:

ՅՈՒՍՈՒՖ. — Պայմա՞ն... Ի՞նչ պայման:

ԱՇՐԱՖ. — Վոր նրան ընդունես ինքդ մենմենակ: Քեզ
հեա ցանկացավ առաձին խոսել:

ՅՈՒՍՈՒԹ — Իսկ դու խոստացա՞ք :
ԱՇԽԱՖ — Այո՛, խոստացա :
ՅՈՒՍՈՒԹ — Շնորհակալ եմ : Հոգնել եմ այսոր ե՛ւ, կուլա՛ր, կոլա՛ր... իմ նոր վեղիբնե՛ր, իմ բարեկամնե՛ր, ազգի կամքովն իրանն և դրված իմ և ձեր ուսին, պետք և պահպանել պատերի թողած այդ սուրբ ավանդը... Ձեր գործին անցեք : Քննե՛ք ու դատե՛ք և վաղը սկառաստ ինձ ներկայացեք :

ՎԵԶԻՄՆԵՐ — Հանգստացեք, տեր : Ամեն ինչ վաղը պատրաստ կլինի (Դուրս են զնում) :

ՅՈՒՍՈՒԹ — Դեե՛ր, դյուցազնե՛ր... զեե՛ր, դյուցազնե՛ր... Խոջա Մուրարե՛ք, հոգնել եմ արդեն և սաստիկ քաղցած : Կարդադրիր շուտով սեղան պատրաստել :

ԽՈՉԱ. ՄՈՒԲ — Սեղանը ներսում պատրաստված է, արքայից արքա միայն թե տերս թո՛ղ չնորհ անի մի շա՞տ չնչին բան իրան հիշեցնել :

ՅՈՒՍՈՒԹ — Խոսի՛ր, միայն կարճ :

ԽՈՉԱ. ՄՈՒԲ — Արքայից արքա, դու քո մտերիմ մարդկանցը վեղիր նշանակեցիր... Դա իմաստության պարզ ապացույց եր... սակայն մոռացար...

ՅՈՒՍՈՒԹ — Ի՞նչը մոռացա :

ԽՈՉԱ. ՄՈՒԲ — Հին վեղիրներին... լուուրյուն :

ՅՈՒՍՈՒԹ — Լա՛վ, այս բոպեյիս հրամայում եմ պաշտոնանկ անել :

ԽՈՉԱ. ՄՈՒԲ — Այդ բավական չե :

ՅՈՒՍՈՒԹ — Ելի ի՞նչ մնաց :

ԿՈՉԱ. ՄՈՒԲԻ: — Տրուտի զարձրած անխվան անվամ, յերբ դարձնելուց նա դադարում է, դարձյալ, ինքն իրան, անշունչ անխվը, մի քանի րոպե պտուրո և տալիս... Այսպես և նրանք: Հնարավոր չեմ մի հրամանով և մի որվա մեջ հին վնդիրների ուժը պակասեցնել: Նահանդապետներ, դինմորականներ և ուրիշ շատ-շատ աղնվականներ նրանց մարդիկն են: Նրանք պաշտոնանկ լինելուց հետո, յերբ վոր վողջ մնան, վոտքի կհանեն ու կորդուն զորքին, ամբոխին և քո թանկադին կյանքին կոտառնան:

ՅՈՒ. ՄՈՒԲԻ: — Ճիշտ և այդ, բայց թե... ի՞նչ պետք և անել:

ԿՈՉԱ. ՄՈՒԲԻ: — Հին շահերից մին, յերբ դահ բարձրացավ, սիրով, ժամանով, իր մոտ հրավիրեց հին վեղիրներին, իսկ այնուհետեւ, հրաման տվեց ջարդել բալորին և հետո ասաց — «Նոր վրանին նոր պարանձ»:

ՅՈՒ. ՄՈՒԲԻ: — Արյունն... Զե, չե, չե... իմ ուժը խոսքն և, ճշմարտությունը...

ԿՈՉԱ. ՄՈՒԲԻ: — Ճշմարտությունը, խօսրի նման, վորոշ ձեւ չունի. ինչ ձեւ ամանի մնջ վոր լցնես, այն ձեն ել կառնի: Զեյի ուղենա այդ ճշմարտությամբ տիրոջս արյունը դուր թափված տեսնել:

ՅՈՒ. ՄՈՒԲԻ: — (Մտածելով) Դեե՛ր, դյուցադնե՛ր... (Խոշտ Մուրարի քիու) Հրամայում եմ... կանչի՛ր Աղըմ բեկին, անձնապահ զորքիս հրամանատարին...

Խոջա Մուրարեմը գնում է :

Դեե՛ր, դյուցազնե՛ր . . .

Խոջա Մուրարեմ և Ազրմ քեկ գալիս են :

ՅՈՒՍՈՒԹ — Աղլոմ բե՛կ, մինչ այժմ քո ինձ մատուցած ծառայությունը դնահատելով, պարզեցում եմ քեզ խանության տիտղոս և խոստանում եմ, քո ինձ ցույց տված հավատարմության հավասար չափով, շտապ բարձրացում և պարզեատարում :

ԱԶԼՄ ԲԵԿ — Արքայից արքան ինձնից կաեանի մի չտեսնած հավատարմություն, դադտնապահություն և ծառայություն իմ կյանքի դնով :

ՅՈՒՍՈՒԹ — Հենց այս բոպեյխս, ծածուկ, խիստ ծածուկ, պալատ կկանչես հին վեղիրներին և . . . կրանտարկես :

ԱԶԼՄ ԲԵԿ — Դլախ'ս վրա, տեր : (Գնում ե) :

ԽՈՉԱ ՄՈՒԲ — Յերեաց խսկույն, վոր տերս ինձնից շատ իմաստուն ե : Այժմ թույլ տրվի հայտնել տիրոջս, ինչպես վոր կարգն ե, մեր մեծ հարեմում, սիրուն հարճերը պատրաստվել են դալ, նոր արքայի առաջ խոնահվել և իրենց անկեղծ հավատարմության յերաշխիքը տալ :

ՅՈՒՍՈՒԹ — Ինչպես վոր կարգն ե, թո՛ղ այդպիս լինի :

ԽՈՉԱ ՄՈՒԲ — (Ծափ ե տալիս, հարեմում սկսվում ե յերածշտուրյուն, դուրս են գալիս հարեմի կանայք, խոնարհվում) Առաջնորդեցե՛ք կենաց աղբյուրին, փառահեղ սեղան և ընծառ բերե՛ք ձեր

ՔՐՈՒՐ ՀՆՈՐՀՆԵՐՆ : ԲԻ՞Շ նրա շուրջը վաննաթը
ծաղկի և հուրիները քաղցր որորեն, լուսե մար-
մինը տրեղակնափայլ մէծ չահե-չահի...

Հարեմի կանայք նպանեով առաջնորդում են
Շահ Յուսուֆին :

ԱՌՋԱ. ՄՈՒԲ : (Մենակ) Բայց այս վախկոտը ծա-
ռայությունս չզնահատեց... վոչ մի աստիճան-
ինձ չշնորհեց... և դրա համար, մի որ կզղա...

ՎԱՐԱԴՐՈՒՅԹ

Բ. ՊԱՏԿԵՐ.


ՀԱՐԵՄ : Մեջտեղում ավագան զրացայտով :
Նստած են կանայք, մի մասը նվազում ե,
մյուս մասը յերգում քախծոտ : Պայլան ծխող-
ներ, քարախված մշուշոտ անծանորին մեջ :
Մտնում ե նազլու խարունը, զնում ե գունագեղ
և նկարագարդ՝ լուսամուտի մոտ : Կանայք աչքե-
րով հետևում են նրան :

ԶԱՐԱՅԱԾ ԿԻՆ : Ասես՝ աշխարհի հողմերն իրան
աված լինելին :

ԿՐՔՈՏ ԿԻՆ : Դժվար ե նրա համար այժմ այս-
տեղ, նա յերազում և Զեյիր արքային, վոր գնաց,
չիա...

ՍՈՒՐԱԿԱԿՆ ԿԻՆ : Մի՞թե իսկապես սիրեց նրան
նա, թշվառության մեջ :

ԳՃՆԱՄԵՐ ԿԻՆ : Հզարառությունը նրան մղեց լոկ
այդպես հանդուղն մի արարմունքի :



ԶԿԱՋՄ կին .— Տանել չեմ կարող յես հոգաբատ կանանց :
ԿՈՒՈՉԱՎԻՉ կին .— Յես ել չեմ կարող... զեղեցիկ
ել և անպիտան կինը :

ԶԿԱՋՄ կին .— Ի՞նչն ե դեղեցիկ... ասում են այստեղ
(ցույց տալով) ականջիք յետե մի հատ ու բիծ
կա :

ԱՌԴԱՐԱԿԱՆ կին .— Բայց մեր նոր արքան, յերբ
բոլորիս ել անպեց, չոյեց, նրա հետ հատուկ
մեղմությամբ խոսեց... և դեռ կխօսեր, յեթե
Ֆիրուզան փորձված սիրո բոլոր ձեւերով, չհրա-
պուրեր թաղավոսին և...

ՔԱԽԾՈՑ կին .— Չարժի մտածել... Յերդիր թախի-
ծով, զայլանից քաշիր, ծխի ու յերդի մեջ ել
հոգուգ վառ կրակը խեղդիր...

ԶԱՐԱՑԱԾ կին .— Յեթև ձեռիցս դար, յես կխեղդեյի
նաղլու խաթունին, վոր լուսամուտից նայում և
այնպիս :

ՊՃՆԱՍԵՐ կին .— Նրա նայլածքը հանգիստ չի տա-
լիս և խոսվում է աղնիսլ Ֆիրուզա խաթունի հո-
գին... Իսկ մեր սիրելի Ֆիրուզան լավն ե, հան-
դուզն, ուժեղ և կարեռը, նա մեր պաշտպանն ե,
ԶԿԱՋՄ կին .— Նա ցանկանում ե լինել պալատի առա-
ջին կինը :

ԶԱՐԱՑԱԾ կին .— Յեկ արժանի յե :

ՊՃՆԱՍԵՐ կին .— Ինձ համար ամեն-ամեն ինչ մեկ
է : Յես կին եմ միայն և գեղեցիկ եմ... այդքանն
արդեն ինձ բավական է : Ով ապահովի ինձ լավ
զգեստներ, զարդ ու զարդարանք և հանգիստ մի
կյանք, նրա մոտ ել յես կմնամ, կապրեմ... Իսկ

թող մտածեն և հուզվեն նրանք, վորոնք ուղղում
են ժամանակից շուտ թառամել, թոշնել:

ԿՈԿՈԶԱՎԻՉ ԿիՆ — Յես մինչև անգամ չեմ ծիծա-
ղում, վոր յերեսիս մաշկը ծալքեր չունենա:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿիՆ — Ա՛յ «հին թաղավոր», ա՛յ «նոր
թաղավոր»... մեզ պետք ե միայն արքա, թաղա-
վոր: Կնոջը պետք ե մի ամուսին, վոր ունենա
բարձր և զորավոր դիրք, թե ունեցավ ել զորա-
վոր մարմին, այդ ել քո բախտին:

ԿՐՔՈՏ ԿիՆ — Խսկ ի՞նչ եք կարծում... նոր թաղա-
վորը կարող ե թերեւս բոլոր կանանց ել բախ-
տավորացնել: Զնկատեցի՞ք, առաջին դիշերն, նա
պատրաստվեց բոլորիս զգվանքն միաժամանակ
վայելելու և կերպը բորբոքվեց. նրա աչքերը
խիստ պլոտորվեցին և նա նմանվեց մի յերաժիշ-
տի, վորն իր յերգի մեջ տենչում ե բոլոր զեղե-
ցիկ կանանց հրապույրներն ի մի ճուլելու:

ՊՃՆԱՄԵՐ ԿիՆ — Այո՛, դա ճիշտ ե... Յեթև Ֆիրու-
զան, մեզ վերջին պահին չհեռացներ, նոր թա-
ղավորը արդեն պատրաստ եր բոլոր կանանց իր
մոտ պահել ե...

ԶԿԱՄ ԿիՆ — Անկուշտ ե Հոդովի...

ԿՐՔՈՏ ԿիՆ — Միմիայն հողին ի՞նչ պետք ե անեմ:
ԹԱԱՆՇՈՏ ԿիՆ — Զարդի մտածել... Յերդիր թափառ-
քեն, զայլանից քաշիր, ծխի ու յերդի մեջ ել Հո-
դուղ վառ կրակը խեղղիր....:

ԿՐՔՈՏ ԿիՆ — Յեկ մտածել, վոր այս պահին, ի՞նչ-
քան մարդիկ կան կարոտ նույն այն տենչանքին,
վորի կրակով վառվում ենք ներքուստ:

կանայք սկսում են մռանալ լուսամուտներից
ասես վնառում են հեռու հորիզոններ։ Ներս ե
մտնում լոջա Մուրարեքը, վոսք գետին ե
խփում, փշաբաղիչ ձայնով։

Ա. ՄՈՒԻԲ. — Լուսամուտներից հռանալ իսկույն։

Հարեմի կանայք իրար են խառնվում, ասես
աղունակների խումբ լինի։

ՆԱԶԼՈՒ. — Ինչո՞ւ յես նորից կատաղել, ճերո՛ւկ։

Ա. ՄՈՒԻԲ. — Յերազանքներն եմ տեսնում հարեմի կա-
նանց աչքերում... Իսկ կանանց համար տմեն մի
յերազ վատ և վերջանում։

ՆԱԶԼՈՒ. — Ինչքա՞ն ցուրտ են քո խոսքերն այսոր,
Խոչա Մուրարեք... Այն հողիները, վորոնք մըր-
սում են, ի՞նչ ունեն բացի յերազանքներից։

Ա. ՄՈՒԻԲ. — Կինը, մանավանդ այստեղ, հարեմում,
պետք չե յերազի։

ՆԱԶԼՈՒ. — (շինդագեղ ծաղկամանի միջից վերցնելով
մի ծաղիկ) Բարկանության համար մարդկե-
րանց, կարսում են ծաղիկն իրա թիֆից... ծաղիկն
այդ պահին վայինչ չե զգում, միայն ցողունն ե
լորի ձաղոսում։ Դա հրաժեշտի, հավերժ բա-
ժանման, արտասուզն ե իրական կյանքից։

Ա. ՄՈՒԻԲ. — Հետո, իսկ հետո...։

ՆԱԶԼՈՒ. — Հետո, զնում են ծաղիկն այդ չքնաղ
շքեղ ամանում, ջրի մեջ պահում։ Թվում ե, թե
նու ապրում ե այնտեղ առաջվա նման, բացում ե
նույնիսկ թերթերն իր նուրբ, թիթեսի նման ե
մելամաղձոտ ժպտում ե մարդկանց։ Ո՛, այդ

Ժպիտը, վոր պարտադիր ե... յերազանքն ե այդ
ծաղիկին քնքուշ, վոր թոռմելու յե:

Խ. ՄՈՒԲ.— Հեռու յես գնում...

ՆԱԶԼՈՒԻ.— Միևնույնն ե..., Մեզնից ամեն մեկն
նման ե ծաղկին, թփից կտրված: Նրա այդ ան-
շարժ թվացող կյանքը լուս, բայց որընթաց մի
ալացում ե, ուղղված դեպի մահ:

Խ. ՄՈՒԲ.— Ուղղված դեպի մահ:

ՆԱԶԼՈՒԻ.— Այո՛, դեպի մահ: Թո՛ղ վոր, ուրեմն,
մահվան մութ ճամբին, լուսե մի յերազ մեղ լու-
սավորե...

Վերջին նախադասության ժամանակ մտմում
ե Ֆիրուզա խաբումը, զգացվում ե մոտավոր փո-
քորիկ:

ՖԻՐՈՒԶԱ.— Իսկ ո՞վ ե քո այդ յերազը լուսե:

Խ. ՄՈՒԲ.— (բարկությամբ) Իսկ դու ինձ ասա, ո՞վ
ե տվել քեզ իրավունք այդպես հանդուգն ձեռվ
հարցում անելու:

ՖԻՐՈՒԶԱ.— (Նազուի ուսից բռնելով) Քեզ հարց եմ
տալիս, ասա, ո՞վ ե քո յերազը լուսե:

Խ. ՄՈՒԲ.— Զհամարձակվես դու ձեռք տալ նրան:
Քեզ հարց եմ տալիս — վո՞րտեղից քո այդ հար-
ցում անելու հանդուգն ձեռը իմ ներկայության:
Ասես թագուհյաց թագուհի լինի:

ՖԻՐՈՒԶԱ.— Յեվ լինելու յեմ:

ԿԱՆԱՔ.— Ինչպե՞ս:

Խ. ՄՈՒԲ.— Ի՞նչ ասիր:

ՖԻՐՈՒԶԱ.— Յեվ վոչ մի արգելք չի կարող յերբեք
խափանել ճամբաս: Շահ Յուսուֆի հետ յես եմ

անցկացրել զիշերն անքուն։ Յես բաց եմ արել
հրապույրներիս անվերջանալի շտեմարանը՝ ջեր-
մաջերմ խոսքեր, նաղանք ու զգվանք, մարմնի
բյուր ձեռը, այդ բոլորի հիմ մի սառը քրտինք,
վորը նշանն և ստեղծագործման... Նորընտիր
շահը ամենքից առաջ ինձնից կունենա ծնունդն
տուաջին և այն ել տղա... հավատացած եմ...
Յես հիմիկվանից ինձ մայր եմ զգում թագաժա-
ռանդի... Լսեցի՞ր այժմ, Խոջա Մուբարեք։

Կ. ՄՈՒԲԻ. — Լսելը քիչ ե։

ՅԻՐՈՒԻՉԱ. — Ուզում ես ասել, մինչ այդ իմ ճամ-
րին հաղար արգելքներ... .

Կ. ՄՈՒԲԻ. — Այս', արգելքներ կարող են լինել։

ՅԻՐՈՒԻՉԱ. — Կարո՞ղ են լինել... Եղ վագրէ
նման, դիտեմ յես կովել ամեն տեսակի արգելքէ
ընդդեմ... միայն կա մեկը... .

Կ. ՄՈՒԲԻ. — Միմիայն մե՞կը... .

ՅԻՐՈՒԻՉԱ. — Այս, միմիայն։

Կ. ՄՈՒԲԻ. — Ո՞վ ե այդ մեկը և ինչո՞ւ մեկը։

ՅԻՐՈՒԻՉԱ. — Յես կին եմ, խոջա, իսկ կնոջ սիրաց,
հաղար մի անտես ներքին թելերով, իսկույն զգում
և հակառակորդին։

Հարեմի կանայք սկսում են ցրվել, նաղուն
և ուզում ե հեռանալ։

Կ. ՄՈՒԲԻ. — Նաղու խաթուն, դո՞ւ ինչո՞ւ յես
դնում։

ՆԱԶԻՌԻ. — Իր բարկության մեջ լավ ե առանձին
թողնել խաթունին։

- ՖԻՐՈՒԶԱՆ**. — Յես առանձնության կարիք չեմ զգում :
ՆԱԶԼՈՒԻ. — Իսկ յես զգում եմ :
- ՖԻՐՈՒԶԱՆ**. — Ճշմարիտ չե այդ... Մնա՛ դու այս-
 տեղ և ինձ ականջ դիր : Յերբ Յուսուֆ արքան,
 սիրո առաջին ընթացքից հոգնած կարդադրեց
 իրան առանձին թողնել, յես առիթ գտա սենյա-
 կում ելի մի քիչ մնալու... Նա դեռ պառկած եր,
 աչքերն շեշտակի խրած անորոշ տարածության
 մեջ : Հետո թուղթ վերցրեց, սկսեց դրել...
- Խ. ՄՈՒԲ**. — Նազլու, ճի՞շտ ե, վոր նորընտիր արքան
 դրում ե այժմ բանաստեղծություն :
- ՆԱԶԼՈՒԻ**. — Այն վո՞ր դրագետ պարսիկն ե, վոր
 կյանքում չի փորձում բանաստեղծություն :
- ՖԻՐՈՒԶԱՆ**. — Իսկ Յուսուֆ արքան իրա դրածը ո՞ւմըն
 և կարդում :
- ՆԱԶԼՈՒԻ**. — Զգիտեմ ումը, բայց յերեկ գիշեր ինձ
 կանչել տվեց, նստացրեց իր մոտ, հարց ու փորձ
 արնց հնից ու նորից, հետո սկսեց, վողեւորու-
 թյամբ, իր դրած տողերն կարդալ բարձրածայն :
- ՖԻՐՈՒԶԱՆ**. — Իսկ ի՞նչ եր դրած :
- ՆԱԶԼՈՒԻ**. — Յես պարտավոր չեմ հայտնել արքայի
 դրած տողերի բովանդակությունն ամեն մի ինո՞չ :
- ՖԻՐՈՒԶԱՆ**. — Ամեն մի կնո՞ջ... ողնիր ինձ, Խոջա,
 վոր կարողանամ ինքն ինձ զսպել...
- Խ. ՄՈՒԲ**. — Հանդարտ պահիր քեզ, Ֆիրուզա խա-
 թուն... Ովզ վոր ուղում ե իշխել մեծ մարդկանց
 կամքերի վրա, ամենից առաջ պետք ե դիտենա՝
 լսել իմանալ, առանց վրդովման :
- ՖԻՐՈՒԶԱՆ**. — Յես չեմ վրդովմում... Միայն թող ասի,
 ինչե՞ր ե դրում նոր շահնշահը, ի՞նչ և ո՞ւմ
 մասին :

Ա. ՄՈՒԽԻՏ: — Յեթև անձնական մի գաղտնիք չկա Նազ-
լու խաթունի և արքայի մեջ, նա մեղ պարզ
կասի:

ՆԱԶԼՈՒԻ: — Անձնական գաղտնիք... իմ և նորընտիր
արքայի միջեղիք...

ՖԻՌՈՒԻՉՈՒ: — Ենչու յես հուզվում... քո ամբողջ
կյանքը մենակություն և յեղել շարունակ: Յերբ
նախկին արքան մերժեց քեզ իրա հետը վեր-
ցընել... նորից մենակունակ մնացել ես դու...
Իսկ մարդկանց համար, մանավանդ կնոջ, փոր-
ձությունների ամենամեծը մենակությունն ե...

ՆԱԶԼՈՒԻ: — Վոչ, յերբեք, յերբեք...

ՖԻՌՈՒԻՉՈՒ: — Այսինքն ի՞նչ յերեք... Յեթև հիմա
ել նորանոր կաղովի կապված չես զզում Յուսուփ
արքային, ուրեմն ասա, նա ի՞նչ և զբում:

ՆԱԶԼՈՒԻ: — Արքան գրում և դատողություններ ապ-
րած որերի և կյանքի մասին:

ՖԻՌՈՒԻՉՈՒ: — Յեվ նա կարդում ե, իսկ դու լսո՞ւմ
ես:

Ա. ՄՈՒԽԻՏ: — Շատ ճիշտ եք առված, — «Ամեն կնոջ
սիրա հաղար մի անտես նրբին թելերով իսկույն
զզում» և «ակասակորդին»:

ՆԱԶԼՈՒԻ: — Վոչ, սիարվում եք, յես մտադիր չեմ
հակասակորդը լինել վոչ վոքի: (Լոււրյութից
հետո քնարական հուզականությամբ) Պատմել են,
դիտեմ, թէ ինչպես նախկին շահերից մեկը կնու-
թյուն վերցրեց քնքուշ, զդայուն, շուշանի նման
մի սիրողուհու, անունը Թութի... սիրեցին
նրանք, սիրեցին միմյանց արտակարդ սիրով...
Թութի համար, մեծ սիրո առաջ, վառք, իշ-

խանություն կորցրին իրանց խարուսիկ փայլը...
Բայց աշխարհումն այս ունայն, անցողիկ, ո՞ւն
ե տրված ապրել յերջանիկ յերկար ժամանակ...
Վառվող մոմի պես ազառյեց կինն այդ իր սիրո
բոցով և մի դաժան որ, մահվան ցուրտ քամին
փչեց ուժգնորեն և մոմը հանդավ և թութին մե-
ռավ...

Խ. ՄՈՒԲ. — Հարեմի մյուս կանայք նրան թունավո-
րեցին...

ՖԻՐՈՒԶԱ. — (Աշքերում մի փայլառակում) Թունա-
վորեցի՞ն...

ՆԱԶԼՈՒ. — Թունավորեցին... Զեզ, թող ձեղ լինի
թագավորական այս շքեղությամբ վոսկեղոն
բանտը... յես նախընտրում եմ լեռների ողջ,
տարածությունն ազատ դաշտերի, դժվարությու-
նով վաստակված չոր հաց, կազույտը յերկնի,
և հողու անդորր, սեր, ազատություն...:

Կ. ՄՈՒԲ. — (Վճռնիկ նման փշոտվելավ) Լոկ'ր, հե-
րէք ե... վտանգավոր ե խոսքերիդ վողին.
(Չուրջի կանանց) Հեռացեք խոկույն, ի՞նչ եք հա-
վաքվել, ի՞նչո՞ւ յեք լսում:

Մտնում ե Մուֆադդալը:

ՄՈՒՖԱԴԴԱ. — Արքայից արքան ցանկացավ իր մոտ...
ՖԻՐՈՒԶԱ. — Ինչպե՞ս, զարթնե՞լ ե...

ՄՈՒՖԱԴԴԱ. — Այո, զարթնել ե և ցանկանում ե...
Նազյու խաթունին:

ՆԱԶԼՈՒ. — Ի՞նձ, ի՞նչո՞ւ համար:

ՄՈՒՖԱԴԴԱ. — Այնպես, կանչում ե...

ՆԱՇԼՈՒՄ. — Այդ չի կարելի...

ՖԻՌՈՒԶԱ. — Յև եւ եմ ասում այդ չի կարելի...
Լսիր ինձ, Նազյու, խարելն ինձ հեշտ չե... Լսեք
ինձ, կանայք, տեսնո՞ւմ եք սրան գեղածալ մի
ոճ, վոր սողոսկել ե մեր հարեմից ներս և բույն
և դնում: Նախկին արքային լքող կանանց մեջ
միայն սու կտղմեց բացառությունը... Յեթե աշ-
խարհի կանանց հավաքեն և նրանց բոլոր խորա-
մանկությունն զննեն կշեռքի նժարի մի կողմն,
սրա արածը մյուս նժարում ավելի՛ ծանր կշիռ
կունենա... Զոհարերությունն այն կեղծ դիմակն
է, վորով ծածկված տվելի հեշտին, հաճախ խա-
րսում են տղամարդկանցը:

Բ. ԿԻՆ. — Իսկ Յուսուֆ արքան մի տղամարդ ե...

ՖԻՌՈՒԶԱ. — Յե՛վ ուժեղ, և՛ թույլ ինչպես տղա-
մարդ... Ինչո՞ւ յեք կանդնել, հարձակվեցեք
շուտ Նազյուի վրա, պատառեք կաշին, զղեք մա-
ղերը, խեղդեցեք նրան, քանի նա ինքը... (հար-
ձակվել ե ուզում Նազյուի վրա):

Կանանց մեջ շարժում:

Կ. ՄՈՒԲԻ. — (Ահավոր նիշով) Հանդա՛րտ... հեռա-
ցե՛ք...

Կանայք կամք են առնում:

Կ. ՄՈՒԲԻ. — Ծանազարհ տվեք արքայի սիրուն, ար-
քայի կամքին:

ՖԻՌՈՒԶԱ. — Չե, չե, չեմ թողնի... (Յետվում ե և
չոփում Նազյուի առաջ արտասվախառն ու դար-

նաղի) Նազլու, իմ Նազլու, քո այդ մեղմությամբ, անդիմադրելի կանացիությամբ, մի խլիքինձնից Յուսուփ արքային... Աղաչում եմ քեզ, աղաչում իրրե մի կին, վոր հաստատ հայտագած ե, թե իր արդանդում մի թագաժառանդնունդ ե առնում և մայր և դառնում: (Մազերը սկսում ե Նազլուի վատների առաջ):

Նազլուն հետ-հետ և քաշվում:

Խ. ՄՈՒԲ — Ճանապարհ տվեք արքայի սիրուն, արքայի կամքին:

Կամայք շարք են կանգնում, Ֆիրուզան ընկած ե: Իսկ Նազլուն անշարժ:

Վ Ա Ր Ա Դ Ո Ւ Թ Յ Ր

Գ. ՊԱՏԿԵՐ

Պալառում դահլիճ: Յուսուփը նստած երախտին, նրա վատներին, գետնի վրա, նստած Նազլուն, խոնարի:

ՅՈՒՍՈՒԺ — Շքեղանք, արլիեստ և կյանքի բոլոր բարձրագույն ձևերն թագավորներն են միայն ըստեղծել: Շահերն են կերտել գեղի, պերճանքի, տնմահ կոթողներ, վորպեսպի մարդկանց սերունդը, հավերժ, դաշերով, գիտի: Մրտիս մեջ, ասես, անդադար յերգող տամիլդներ լինեն... Գեղեցիկ կանայք աղնավացնում են մարդկային հոգին... Մարդ, յերբ սիրում ե, բարի յե դառնում... բարիք եմ ուղում ամբողջ մարդկության, վարթամ

Հարստին, հետին աղքատին և այլ բարիքը յես
կիրաղործեմ... լավ և, շատ լավ և թադավոր
լինել...:

ԿՈՉԱՆ ՄՈՒԻԲ: — (մտմելով) Մեծ Շահն-Շահը միշտ
ապրած կենա:

ՅՈՒՍՈՒԹՅ: — Ի՞նչ նորություն կա, Առջա Մուրարեք:

ԿՈՉԱՆ ՄՈՒԻԲ: — Տերս վողջ մնա, նոր վեզիրները ներ-
կայացել են և ցանկանում են խմանալ, արդյոք
արքայից արքան արամադի՞ր և իրենց ընդունել:

ՅՈՒՍՈՒԹՅ: — Այդ ի՞նչ Հարցում և, ասա՛, թո՛ղ ներս
դան:

(Խոջա Մուրարեքը ծափ և տալիս, յերկու
ներքինիներ տամում են Նազլույին):

ՅՈՒՍՈՒԹՅ: — (մնալի) Ինչպիսի՞ որեր և ի՞նչ գիշեր-
ներ յես անցկացրել եմ արդեն պալատում...
Եյա՞նք եր թէ՝ յերազ... (Վերցնելով արծարյա-
հայելին) ՄԻ՞Թե ինկապես զեղեցիկ եմ յես...
Ինչո՞ւ այլ վասին թաղավոր չեղած յես չեյի
լսել... Հարեմի կանայք բոլորն ել դատան, վոր
զեղեցիկ եմ, հուժկու, կորովի. կարապի նման
ծաց լոզ տվին, բլբուլի լեզվով ինձ փաղաքշե-
ցին... Այժմ, յերբ կյանքի յերկու կողմին ել
անձամբ ծանոթ եմ, ողետք և անաշառ իմ խոսքն
առեմ... Գեղեցկությունը, վորն անմահ և, ամ-
րոխի գործ չե:

ԿՈՉԱՆ ՄՈՒԻԲ: — (դոնից) Յերկրագեցեք կենաց աղ-
բյուրին:

(Մտնում են նոր վեզիրները):

ՅՈՒՆՈՒԹ — Յեկե՛ք, սիրելի՛ք, այսոր մեր ազգի և
մեր պետության մասին ուղղում եմ խոսել և յսել:
Ասացե՛ք տեսնեմ, ինչպե՞ս են գնում յերկրի դոր-
ծերը:

ԶԵՄԻԼ — Ամեն ինչ լավ և, արքայից արքա: Պետք
է քեզ հայտնենք, վոր յերեկ մի խումբ շատ հա-
րուստ մարդիկ մեզ դիմում արին և իրանց ան-
կեղծ ծառայությունը առաջարկեցին:

ԿՈՒՐԲԱՆ — Խնդրեցին թույլ տալ, վոր բանվոր
մարդկանց և մշակներին սիրով հավաքեն և կա-
մուրջների, ճանապարհների վերաշխության իս-
կույն ձեռնարկեն:

ԶԵՔԻ — Մի խումբ պատվավոր վաճառականներ,
վորոնց մեջ նաև մի անդյիացի աղջեցիկ Բալյող,
մեզ ներկայացան և հայտնեցին, վոր նորընակը
շահին, իրանք պատրաստ են, սիրով ծառայել...

ԹԱՄԱՉԱՆ — Յեթե մենք, նրանց դյուրություններ
տանք ու պայման կնքենք, նրանք պատրաստ են
գործարան բանալ, բոլոր պետությանց հետ կանգ
հաստատել, մեծ յերկրների բարիքներովը վողջ
Պարսկաստանը հարստացնել:

ՅՈՒՆՈՒԹ — Պատրաստեցեք շուտ թաղավորական
մի հրովարտակ և հայտնեցեք այդ պատվավոր
մարդկանց, վոր իրանց բոլոր ցանկությունները,
իսկույն, մեր որոք, կիրադրելին:

ԶԵՄԻԼ — Շատ բարի. տեր իմ:

Մտնում ե Մեվլանան, բոլորը վստի. նա
նստում ե Յաւառից հետո առաջին տեղը և նշան
ե անում դեպի դուռը:

(Խոչա Մուրաքեմ մտմելով մասուցամ և ափ-
սեյի մեջ մի քանկագին ընծա) :

ՄԵՎԼԱՄՆԱԿ. — Տեր իմ, մայրաքաղաքի վաճառա-
կաններն այս համեստ ընծան ահիվ դնում են կե-
նաց աղբյուրի վոստների առաջ և խնդրում են,
վոր արքայից արքան մեծ շնորհ անի իրանց տե-
սության արժանացնել :

ՅՈՒՍՈՒՅ. — Խնդրեմ: Հարդանքով ներս բերեք
նրանց:

Խոչա Մուրաքեմը դուրս:

ՅՈՒՍՈՒՅ. — Այսոր իմ կյանքի յերջանիկ որն ե.
ամբողջ իրանին յես պետք ե ցույց տամ, վոր
թագավորը ժողովրդի հետ սրտանց կապված ե:
ԽՈԶԱ. ՄՈՒԻՄ. — (դոմից) Եերկրպագեցե՛ք մեծ շահն-
շահին:

Վաճառականները մտմելով յերկրպագում են:

ՅՈՒՍՈՒՅ. — Զեր հավատարիմ այցելությունը ուրա-
խալի յե: Հաստատ ասում եմ, ձեզ նման մար-
դիկի, հմուտ ու տեղյակ յերկրի դանձերին,
հմուտ ու տեղյակ հարեւան ազգաց ճանապարհնե-
րին, բոլորի ջանքով, արդար առևտրով, պետք
ե աշխատեն, վոր թշվառ, հյուծված այս մեր
յերկիրը, իր հարստությամբ փայլի ու ծաղկի:
Հարստությունը մի ազգի թագն ե և դուք կլինեք
իմ դլիսի թագի ազամանդները:

Ա. ՎԱՃԱՄԻ. Արքայից արքա՛, մենք յերջանկության
խոսքեր չենք դանում: Առաջին անգամ Պարսից
աշխարհում, իրանի դահին բաղմած մի արքա,
պատիվ և անում իր արեղնախայլ շնորհը սկսել

Համեստ, զւրծունյա, առևտրի մարդկանց։ Մեր
դլիսի վրա կաշխատենք պահել այդ մեծ շնորհը։
ՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ — Չափազանց գոհ ենք մեր ժողովրդից։
վոր այսպես ջերմին հալատարմությամբ, իր
զգացմունքը յեկալ մեղ հայտնել։ Վաճառական-
ներ մեծն իրանի, ձեր խնդրանքները բավարարված-
են։ Մեր մեծ վեղիբը, Միրզա Զեմիլ խան, շու-
տով կհանձնի ձեղ մի հրովարտակ, վորով, մեր
որոք, կվայելեք դուք ամեն տեսակի ոժանդա-
կություն, պատիվ և հարդանք։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ — Կեցե՛ լուսառու, բարերար աղ-
բյուր, մեջ Յուսուֆ արքան։ (Դարս են զնում)։
Դրսում ազմուկ։

ՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ — Ի՞նչ աղմուկ և այդ։

ԽՈԶԱ ՄՈՒԲ — (ներս և մտնում այլայլված) Արքա-
յից արքա, յերեք անծանոթ մարդիկ են յեկել,
վորոնք հաղած են հին ցնցոտիներ, բռնի ուղում
են քո վոտն համբուրել։ Նրանք պնդում են, մոր
կենաց աղբյուրին վազուց ծանոթ են և խնդիր
ունեն։

ԶԵՄԻԼ — Հանգստացեք, տեր, նրանց թնդիրը ինքու
կընեմ։

ՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ — Վո՛չ, վո՛չ, այդ լավ չե։ Խոջա Մուրա-
քե՛ք, ներս մտցրու նրանց... Մի՞թե հոր համար
բոլոր վորդիքը հավասար կերպով սիրելիներ չեն։

Խոջա Մուրաքեք ներս և մտցնում յերկրորդ
արարվածի յերեք զյուղացիներին։

ԶԵՄԻԼ — Կարդ ու կանոնը խանդարում եք դուք։
Շո՛ւտ, առաջ անցեք։

ՅՈՒՍՈՒՅ — Ասացնք տեսնեմ, ի՞նչ խնդիր ունեք ։

Ա. ԳՅՈՒՂ. — (ուրախ շփորմումքով) Հա՛...

ՅՈՒՍՈՒՅ — Այս՝, մի քաշվի՞ր, ինչո՞ւ յեզ յեկնէ :

Ա. ԳՅՈՒՂ. — Այս և... Ռւղում ենք, քանի վոր հիմք աղասություն ե, Շահն ապրած կենա, հող չունենք... .

ՅՈՒՍՈՒՅ — Լավ, լավ, հասկացաւ Միբղա Զեմիլ խան, կարդաղը իր խկույն այս մարդկանց համար հոգեր պարզենէ :

ԳՅՈՒՂԱԾԻՔ. — Շահն ապրած կենա :

ԶԵՄԻԼ. — Տերս արդար ե, մի քանի մարդու հողեր պարզենէ ինչ գժվար բան ե. սակայն մտածեք, որանք մենակ չեն. յերբ սրանց տվինք պետք երալորին ել անվիճջ պահանջեն : Յնրկնի աստղերի թիվը կհատնի, բայց որանցը վոչ. իսկ մենք չենք կարող ուրիշի հոգի ու սեփականությունը խլել, առև սրանց. զա արդար գործ չե :

ՄԵՎԼԱՆԱ. — Անարդար գործ մենք յերբեք չենք անի :

ՅՈՒՍՈՒՅ — Այս'... Անարդար գործ մենք յերբեք չենք անի :

ԶԵՄԻԼ. — Մենք մեր գյուղացուն լավ ենք ճանաչում: Նա իր վիճակից վոչ մի որ դոհ չե, ուռ ել չի լինի: Տրեխավորից ասոված մեղ փրկի և որածանկ, աղետ, խարդախ, խարերա... .

Ա. ԳՅՈՒՂ. — Յա՛... (Յուսուֆին) Զլինի', վոր դու սրան լոես... Բա՛, ինչե՛ր ասաց :

ՅՈՒՍՈՒՅ — (հանդարտ) Լոի՛ր :

Ա. ԳՅՈՒՂ. — Դու մեղ լավ գիտես, քեզ մոտ յեղել ենք, այն ժամանակը, վոր դու մեղ համար նամակներ ու արիզաներ ելիք գրում... Ե՛հ...

ՄԵՎԼԱՆԱՆ — Լոիր:

ՅՈՒՍՈՒԹ — (դժգոհ) Լոիր, ասում եմ:

Ա. ԳՅՈՒՂ — Սրան մի լսիր, մեղ հայհոյում ե...

ՅՈՒՍՈՒԹ — (բարկացած), Լոիր, ասացի: Հեռաց-
բե՛ք սրանց:

ԽՈՉԱ. ՄՈՒԲ — Դահիճին կանչե՞մ:

ՅՈՒՍՈՒԹ — Վոչ, հարկավոր չե, հեռացբե՛ք մի-
այն:

ԽՈՉԱ. ՄՈՒԲ — (դոմից Փերրաշներբն կանչելով,
զյուղացիներին դուրս և քշել տալիս) Աղոթք ա-
բեք կենաց աղբյուրին, վոր ձեղ կյանք բաշխեց:
Գյուղացիները դուրս:

ՄԵՎԼԱՆԱՆ — Արքայից արքան այսոր փայլեց իր ար-
դարությամբը: Թագավորների պատմության մեջ
թող մի նոր եջ բացվի ու յերդիչերը այս պայ-
ծառ որը թո՛ղ բանաստեղծեն:

